# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

**Ստանդարտացման ազգային համակարգ**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ

(ISO/IEC Guide 21-1:2005, NEQ)

**ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Պաշտոնական հրատարակություն**
**ԵՐԵՎԱՆ**

# Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և ստանդարտացման աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՍՏ 1.0-2006 «Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ», ՀՍՏ 1.2-2001 «Ստանդարտացման ազգային համակարգ. Ազգային ստանդարտների մշակումը» ստանդարտներով:

**Տեղեկություններ ստանդարտի մասին**

1 ՄՇԱԿՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից

3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության (ստանդարտացման ազգային մարմնի) 2006 թվականի հունիսի 29-ի N 146-Ա հրամանով

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցման մատյանում, հմ. 459-2006 առ 06.07.2006

5 Սույն ստանդարտը ոչ համարժեք է ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 21-1:2005 «Միջազգային ստանդարտները և այլ միջազգային հրատարակությունները որպես տարածաշրջանային կամ ազգային ընդունումը. Մաս 1. Միջազգային ստանդարտների ընդունում» (ISO/IEC Guide 21-1:2005 «Regional or national adoption of International Standards and other International Deliverables - Part 1: Adoption of International Standards») ուղեցույցին:

6 ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

*Սույն ստանդարտի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև փոփոխության տեքստը հրատարակվում է «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ. Տեղեկատու»-ում: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրապարակվի «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ. Տեղեկատու»-ում: Համապատասխան տեղեկատվությունը, ծանուցումը և տեքստը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում` ինտերնետային ցանցի Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի պաշտոնական կայքում (www.sarm.am):*

**Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի թույլտվության**

# Բովանդակություն

1 Կիրառման ոլորտը ........ 1
2 Նորմատիվ վկայակոչումները ........ 1
3 Տերմինները և սահմանումները ........ 2
4 Ընդհանուր պահանջները ........ 2
5 Համապատասխանության աստիճանները ........ 4
5.1 Ընդհանուր պահանջները ........ 4
5.2 Նույնական ազգային ստանդարտները ........ 5
5.3 Ձևափոխված ազգային ստանդարտները ........ 6
5.4 Ոչ համարժեք ազգային ստանդարտները ........ 7
5.5 Համապատասխանության աստիճանը ........ 7
6 Ընդունման մեթոդները ........ 8
6.1 Ընդհանուր պահանջները ........ 8
6.2 Հավանության մեթոդը ........ 8
6.3 Տիտղոսաթերթի մեթոդը ........ 9
6.4 Վերահրատարակման մեթոդը ........ 9
6.5 Ընդունման մեթոդի ընտրությունը ........ 10
7 Նույնական, ձևափոխված և ոչ համարժեք ազգային ստանդարտների կառուցվածքին և ձևավորմանը ներկայացվող պահանջները ........ 11
7.1 Ստանդարտների կառուցվածքին ներկայացվող պահանջները ........ 11
7.2 Ստանդարտների ձևավորմանը ներկայացվող պահանջները ........ 12
7.3 Խմբագրական փոփոխությունների և տեխնիկական շեղումների նույնականացման կանոնները ........ 18
Հավելված Ա (պարտադիր) Ազգային ստանդարտի նախաբանում կիրառվող տիպային ձևակերպումները ........ 23
Հավելված Բ (տեղեկատու) Միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտները որպես ազգային ստանդարտներ ընդունման մեթոդի ընտրությունը ........ 35
Հավելված Գ (պարտադիր) Ազգային ստանդարտի տիտղոսաթերթի ձևավորման օրինակները ........ 36
Հավելված Դ (տեղեկատու) Նույնական ազգային ստանդարտներում վկայակոչված միջազգային ստանդարտներին ազգային ստանդարտների համապատասխանության մասին տեղեկությունների ձևավորման օրինակը ........ 39
Հավելված Ե (տեղեկատու) Տարբեր տիպերի ձևափոխված ազգային ստանդարտների համար տեխնիկական շեղումների ցանկի և դրանց կատարման պատճառների պարզաբանման ձևավորման օրինակները ........ 41
Հավելված Զ (հանձնարարելի) «Միջազգային և ազգային ստանդարտների կառուցվածքների համեմատությունը» հավելվածի ձևավորման օրինակը ........ 49
Մատենագիտություն ........ 51

# Ներածություն

Առևտրի համաշխարհային կազմակերպության առևտրում տեխնիկական խոչընդոտների համաձայնագրին (ԱՀԿ-ի ԱՏԽ համաձայնագիր) համապատասխան միջազգային և տարածաշրջանային ստանդարտների կիրառումը առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման կարևոր պայմաններից մեկն է:

Միջազգային և տարածաշրջանային ստանդարտների կիրառումը պետք է իրագործվի այդ ստանդարտները որպես Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ ընդունելու միջոցով:

Միջազգային ստանդարտների ընդունման միասնական կանոններ սահմանելու նպատակով Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) և էլեկտրատեխնիկական միջազգային հանձնաժողովի (ԻԷԿ) կողմից մշակվել է ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 21-1:2005 «Միջազգային ստանդարտները և այլ միջազգային հրատարակությունները որպես տարածաշրջանային կամ ազգային ընդունումը. Մաս 1. Միջազգային ստանդարտների ընդունում» (ISO/IEC Guide 21-1:2005 «Regional or national adoption of International Standards and other International Deliverables - Part 1: Adoption of International Standards») ուղեցույցը, որում շարադրված են որպես տարածաշրջանային և ազգային ստանդարտներ միջազգային ստանդարտների ընդունման մեթոդները, ներառյալ՝ միջազգային ստանդարտների և տարածաշրջանային կամ ազգային ստանդարտների համապատասխանության աստիճանի սահմանումը, ինչպես նաև խմբագրական փոփոխությունների, տեխնիկական շեղումների և կառուցվածքի փոփոխությունների նույնականացումը:

Սույն ստանդարտում որոշակիացված են ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 21-1:2005 ուղեցույցի դրույթները՝ հաշվի առնելով ստանդարտացման գոյություն ունեցող փորձն ու միջազգային և տարածաշրջանային ստանդարտների հայերեն թարգմանելու առանձնահատկությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

**Ստանդարտացման ազգային համակարգ**

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ

**Национальная система стандартизации**

ПРАВИЛА И МЕТОДЫ ПРИНЯТИЯ МЕЖДУНАРОДНЫХ И РЕГИОНАЛЬНЫХ СТАНДАРТОВ В КАЧЕСТВЕ НАЦИОНАЛЬНЫХ СТАНДАРТОВ

**National system for standardization**

ADOPTION RULES AND METHODS FOR INTERNATIONAL AND REGIONAL STANDARDS AS NATIONAL STANDARDS

Գործարկման թվականը 01.08.2006

## 1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտով սահմանվում են միջազգային և տարածաշրջանային ստանդարտները (այսուհետև՝ միջազգային ստանդարտներ) որպես Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտներ (այսուհետև՝ ազգային ստանդարտներ) ընդունելու կանոնները և մեթոդները, ինչպես նաև դրանց կառուցվածքին, շարադրմանը, ձևավորմանը ներկայացվող պահանջները:

Սույն ստանդարտի դրույթները ենթակա են կիրառման ստանդարտացման ազգային մարմնի, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների, ստանդարտացման աշխատանքներով զբաղվող կազմակերպությունների, տնտեսավարող այլ սուբյեկտների, հասարակական, գիտատեխնիկական ինժեներական և այլ կազմակերպությունների կողմից:

## 2 Նորմատիվ վկայակոչումները

Պաշտոնական հրատարակություն

Սույն ստանդարտում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.

ՀՍՏ 1.0-2006 Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ

ՀՍՏ 1.1-2005 Ստանդարտացման ազգային համակարգ. Տերմիններ և սահմանումներ

ՀՍՏ 1.2-2001 Ստանդարտացման ազգային համակարգ. Ազգային ստանդարտների մշակումը

ՀՍՏ 1.5-2005 Ստանդարտացման ազգային համակարգ. Ստանդարտներ. Կառուցվածքին, շարադրմանը, ձևավորմանը, բովանդակությանը և նշագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Սույն ստանդարտից օգտվելիս նպատակահարմար է ստուգել վկայակոչված ստանդարտների գործելը ըստ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմված ստանդարտների համապատասխան կատալոգների և ընթացիկ տարում հրատարակված համապատասխան տեղեկատուների: Եթե վկայակոչված փաստաթուղթը փոխարինված է (փոփոխված է), ապա սույն ստանդարտից օգտվելիս պետք է ղեկավարվել փոխարինված (փոփոխված) ստանդարտով: Եթե վկայակոչված փաստաթուղթը չեղյալ է հայտարարված առանց փոխարինման, ապա այն դրույթը, որում վկայակոչված է այդ ստանդարտը կիրառվում է այն մասով, որը չի շոշափում այդ վկայակոչումը:

## 3 Տերմինները և սահմանումները

Սույն ստանդարտում կիրառված են տերմիններ ըստ ՀՍՏ 1.1 ստանդարտի, ինչպես նաև հետևյալ տերմինները՝ համապատասխան սահմանումներով.

**3.1 տեղեկատվական լրացուցիչ տարր՝** Տարր, որը պարունակում է փաստաթուղթը լավ հասկանալու կամ կիրառելու համար լրացուցիչ տեղեկատվություն [1]:

**3.2 տեղեկատվական նախնական տարր՝** Տարր, որը հնարավորություն է տալիս նույնականացնել փաստաթուղթը, ծանոթանալ դրա բովանդակությանն ու մշակման նախապատմությանը և այլ փաստաթղթերի հետ փոխկապակցվածությանը [1]:

**3.3 սկզբունք հետադարձից՝** սկզբունք, համաձայն որի այն ամենը, ինչն ընդունելի է միջազգային ստանդարտի պահանջներով, ընդունելի է նաև տարածաշրջանային և ազգային ստանդարտի պահանջներով, և հակառակը: Այսպիսով, միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխանությունը նշանակում է նաև համապատասխանություն տարածաշրջանային կամ ազգային ստանդարտի պահանջներին [2]:

## 4 Ընդհանուր պահանջները

**4.1** Միջազգային ստանդարտները որպես ազգային ստանդարտներ ընդունման նպատակներն են՝

- առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը,

- միջազգային շուկա Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքների շարժն ապահովող պայմանների ստեղծումը:

**4.2** Որպես ազգային ստանդարտներ կարող են ընդունվել ստանդարտացման տարածաշրջանային այն կազմակերպությունների ստանդարտները, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը և (կամ) առկա է այդ կազմակերպությունների և ստանդարտացման ազգային մարմնի միջև կնքված պայմանագիրը:

Որպես ազգային ստանդարտ միջազգային ստանդարտների ընդունումը չի թույլատրվում միջազգային ստանդարտն ընդունած ստանդարտացման մարմնի հեղինակային իրավունքի խախտմամբ:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Միջազգային ստանդարտների և ԻՍՕ-ի հրապարակումների կիրառումը պետք է իրականացվի ԻՍՕ-ի հեղինակային իրավունքների [3] պահպանմամբ:

**4.3** Միջազգային ստանդարտի հիման վրա ընդունվող ազգային ստանդարտի մշակման կարգը՝ ՀՍՏ 1.2 ստանդարտին համապատասխան:

Ազգային ստանդարտների կառուցվածքը, շարադրումը, ձևավորումը, բովանդակությունը և նշագրումը՝ ՀՍՏ 1.5 և սույն ստանդարտի պահանջներին համապատասխան:

**4.4** Համապատասխան միջազգային ստանդարտների հետ ազգային ստանդարտների փոխադարձ կապը որոշելու համար սահմանվում են համապատասխանության աստիճաններ՝ համաձայն 5-րդ բաժնի:

**4.5** Ելնելով Հայաստանի Հանրապետության տնտեսական շահերից համապատասխան ստանդարտացման միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպության միջազգային ստանդարտները որպես ազգային ստանդարտ ընդունելու ժամանակ դրանց ընդունման ժամկետները կրճատելու նպատակով հանձնարարվում է ազգային ստանդարտի մշակման աշխատանքներն սկսել միջազգային ստանդարտի նախագծի մշակման փուլում (օրինակ՝ ISO/DIS, IEC/CDV միջզգային ստանդարտի նախագծի փուլերում, FDIS միջազգային ստանդարտի վերջնական նախագծի փուլում, համաձայն [4]-ի):

**4.6** Գերադասելի է ընդունել մեկ միջազգային ստանդարտը որպես մեկ ներդաշնակ ազգային ստանդարտ: Մի քանի փոխկապակցված միջազգային ստանդարտների ընդունումը որպես ազգային ստանդարտ թույլատրվում է միջազգային ստանդարտների և ազգային ստանդարտի տեխնիկական բովանդակության ու կառուցվածքի նույնականացման և միանշանակ համադրման պայմանով:

**4.7** Միջազգային ստանդարտի պաշտոնական հրատարակումից հետո ընդունված փոփոխությունները և (կամ) տեխնիկական ուղղումները, մինչև այդ ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունելը, պետք է ընդգրկվեն ազգային ստանդարտի մեջ:

Միջազգային ստանդարտի պաշտոնական հրատարակումից հետո ընդունված փոփոխությունները և (կամ) տեխնիկական ուղղումները, այդ ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունելուց հետո, պետք է ՀՍՏ 1.2 ստանդարտին համապատասխան ընդունվեն սեղմ ժամկետներում:

**4.8** Ընդունվող միջազգային ստանդարտում որպես ազգային ստանդարտ դեռևս չընդունված այլ միջազգային ստանդարտների վկայակոչումների առկայության դեպքում, անհրաժեշտ է ձեռնարկել այդ ստանդարտների միաժամանակյա ընդունման համալիր աշխատանքներ:

**4.9** Որպես ազգային ստանդարտներ ընդունված միջազգային ստանդարտների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության ստանդարտների կատալոգում:

## 5 Համապատասխանության աստիճանները

### 5.1 Ընդհանուր պահանջները

**5.1.1** Ազգային ստանդարտի փոխադարձ կապը համապատասխան միջազգային ստանդարտի հետ որոշելու համար սահմանվում է համապատասխանության երեք աստիճան`

- նույնական,
- ձևափոխված,
- ոչ համարժեք:

Միջազգային ստանդարտին ազգային ստանդարտի համապատասխանության աստիճանը որոշվում է հետևյալի անհրաժեշտությանբ`

- խմբագրական փոփոխություններ մտցնելու,
- տեխնիկական շեղումներ մտցնելու,
- կառուցվածքային փոփոխություններ մտցնելու,
- ազգային ստանդարտում խմբագրական փոփոխությունների, տեխնիկական շեղումների և կառուցվածքային փոփոխությունների նույնականացման:

Միջազգային ստանդարտների հետ ազգային ստանդարտների տարբերությունները որոշելու համար անհրաժեշտ է համեմատել հետևյալ տարրերը`

- անվանումը,
- կիրառման ոլորտը,
- տերմինները և սահմանումները,
- նշագրերը և համառոտագրությունները,
- հիմնական նորմատիվ դրույթները,
- հավելվածները,
- մատենագիտական տվյալները (հանգուցային բառերի մասով):

**5.1.2** Միջազգային ստանդարտը համարվում է ընդունված որպես ազգային ստանդարտ, եթե այն նույնական կամ ձևափոխված է միջազգային ստանդարտի նկատմամբ:

Գերադասելի է միջազգային ստանդարտին նույնական ազգային ստանդարտի ընդունումը:

Եթե միջազգային ստանդարտներով սահմանված պահանջները չեն ապահովում արտադրանքի, աշխատանքի և ծառայության անվտանգությունը մարդու կյանքի և առողջության, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքի, կենդանիների և բույսերի կյանքի, առողջության համար, շրջակա միջավայրի, այդ թվում՝ կենդանական և բուսական աշխարհի անվտանգությունը, չափումների միասնականությունը կամ եթե կան կլիմայական, աշխարհագրական բնույթի էական տարբերություններ և (կամ) հիմնարար տեխնոլոգիական խնդիրներ, ապա միջազգային ստանդարտները կարող են ընդունվել որպես ձևափոխված ազգային ստանդարտներ:

**5.1.3** Միջազգային ստանդարտը կարող է կիրառվել նաև որպես հիմք՝ դրա նկատմամբ ոչ համարժեք ազգային ստանդարտ մշակելու համար:

Միջազգային ստանդարտը չի համարվում ընդունված որպես ազգային ստանդարտ՝ ազգային և միջազգային ստանդարտների միջև համապատասխանության ոչ համարժեք աստիճանի դեպքում:

**5.2 Նույնական ազգային ստանդարտները**

**5.2.1** Ազգային ստանդարտը նույնական է միջազգային ստանդարտին հետևյալ պայմանների դեպքում՝

ա) ազգային ստանդարտը նույնական է տեխնիկական բովանդակությամբ, կառուցվածքով և շարադրմամբ (կամ բնագրաբնույթ թարգմանություն է),

բ) ազգային ստանդարտը նույնական է տեխնիկական բովանդակությամբ, սակայն դրա մեջ կարող են կատարվել խմբագրական փոփոխություններ:

Միջազգային ստանդարտի մեջ թույլատրվում է կատարել հետևյալ խմբագրական փոփոխությունները՝

- տասնորդական կոտորակների մեջ կետը փոխարինել ստորակետով,
- ուղղել ցանկացած գրասխալ (օրինակ՝ ուղղագրական սխալներ) կամ փոխել էջերի համարակալումը,
- մտցնել առանձին հրապարակված միջազգային ստանդարտի փոփոխությունները և (կամ) տեխնիկական ուղղումները, որոնք ընդունվել են դրա պաշտոնական հրապարակումից (հրատարակումից) հետո,
- փոխել միջազգային ստանդարտի անվանումը գոյություն ունեցող ազգային ստանդարտների համալիրների, համակարգերի, խմբերի հետ կապելու նպատակով,

- «սույն միջազգային ստանդարտը» բառերը փոխարինել «սույն ստանդարտը» բառերով,

- մտցնել տեղեկատվական լրացուցիչ տարրեր, որոնք տեխնիկական շեղումներ չեն, չեն փոխում միջազգային ստանդարտի կառուցվածքը (օրինակ՝ հանձնարարելի կամ տեղեկատու հավելվածները, որոնք չեն փոխում, չեն լրացնում կամ չեն բացառում միջազգային ստանդարտի պահանջները),

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Տեղեկատվական լրացուցիչ տարրերի օրինակներ են՝ օգտագործողների համար հանձնարարականները, ուսուցման հանձնարարականները կամ հանձնարարելի ձևերը:

- միջազգային ստանդարտից հանել տեղեկատվական նախնական տարրերը (օրինակ՝ տիտղոսաթերթը, ներածությունը և այլն),

- փոխել միջազգային ստանդարտում տրված առանձին արտահայտություններ, տերմիններ կամ փոխարինել դրանք հոմանիշներով՝ հայոց լեզվի կանոնների և ընդունված տերմինաբանության պահպանման նպատակով,

- տեղեկատվության համար մտցնել մեծությունների միավորների վերահաշվարկված արժեքները, եթե միջազգային ստանդարտով սահմանված միավորները տարբերվում են ազգային ստանդարտներով սահմանվածից:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Ազգային ստանդարտի կառուցվածքի ցանկացած փոփոխություն (օրինակ՝ էջերի համարակալումը, տառատեսակների լրակազմը, դրանց չափերը և այլն), հատկապես էլեկտրոնային կրիչի վրա, չեն ազդում համապատասխանության աստիճանի վրա:

**5.2.2** Նույնական ազգային ստանդարտների համար պահպանվում է «սկզբունք հետադարձից» պայմանը. համապատասխանությունը ազգային ստանդարտի պահանջներին նշանակում է նաև համապատասխանություն միջազգային ստանդարտի պահանջներին:

### 5.3 Ձևափոխված ազգային ստանդարտները

**5.3.1** Ազգային ստանդարտը ձևափոխված է միջազգային ստանդարտի նկատմամբ հետևյալ պայմանների դեպքում՝

ա) պարունակում է տեխնիկական շեղումներ, որոնք նույնականացված են և պարզաբանված,

բ) արտացոլում է միջազգային ստանդարտի կառուցվածքը, որի փոփոխությունները թույլատրվում են կառուցվածքի պարզ համեմատության հնարավորության դեպքում և որոնք նույնականացված են ու պարզաբանված:

Ձևափոխված ազգային ստանդարտը կարող է պարունակել խմբագրական փոփոխություններ, որոնք թույլատրվում են նույնական ազգային ստանդարտների համար՝ սույն ստանդարտի 5.2-ին համապատասխան:

**5.3.2** Միջազգային ստանդարտի նկատմամբ ձևափոխված ազգային ստանդարտը կարող է՝

ա) պարունակել ավելի շատ պահանջներ. ընդլայնել միջազգային ստանդարտի կիրառման ոլորտը, սահմանել ավելի խիստ պահանջներ, լրացուցիչ դրույթներ (պահանջներ), օրինակ՝ լրացուցիչ փորձարկումներ,

բ) պարունակել ավելի քիչ պահանջներ. սահմանել միջազգային ստանդարտի պահանջների որոշ մասը, ոչ խիստ պահանջներ, բացառել առանձին դրույթներ (պահանջներ),

գ) փոխել միջազգային ստանդարտի մի մասը. ազգային ստանդարտի կառուցվածքը նույնական է, սակայն կան առանձին տարբերություններ տեխնիկական պահանջների մեջ, փոխել առանձին դրույթներ (պահանջներ),

դ) ապահովել այլընտրանքային ընտրություն. միջազգային ստանդարտի նկատմամբ դրույթների (պահանջների) լրացման միջոցով տալ այլընտրանքային պահանջների կիրառման
հնարավորություն:

**5.3.3** Մի քանի փոխկապակցված միջազգային ստանդարտների ընդունումը որպես մեկ ազգային ստանդարտ համարվում է ստանդարտների ձևափոխություն՝ անկախ միջազգային ստանդարտում տեխնիկական շեղումների առկայությունից:

**5.3.4** Չձևափոխված ազգային ստանդարտների համար «սկզբունք հետադարձից» պայմանը չի պահպանվում:

## 5.4 Ոչ համարժեք ազգային ստանդարտները

Ազգային ստանդարտը ոչ համարժեք է միջազգային ստանդարտին հետևյալ պայմանների դեպքում՝

- պարունակում է տեխնիկական շեղումներ, որոնք նույնականացված չեն և որոնցով բացատրված չեն դրանց կիրառման պատճառները,

- ունի կառուցվածքային փոփոխություններ, որոնք չեն ապահովում պարզ համեմատումը միջազգային ստանդարտի հետ, և որոնք նույնականացված և պարզաբանված չեն,

- պարունակում է միջազգային ստանդարտի պահանջների չնչին մասը՝ ըստ քանակի և (կամ) նշանակության:

## 5.5 Համապատասխանության աստիճանի նշումը

**5.5.1** Համապատասխանության աստիճանը տրվում է ազգային ստանդարտի տիտղոսաթերթի վրա, մատենագիտական տվյալներում և նախաբանում:

**5.5.2** Տիտղոսաթերթի վրա և մատենագիտական տվյալներում տրվում է համապատասխանության աստիճանի տառային պայմանանշանը.

- «IDT»՝ նույնական ազգային ստանդարտների համար,
- «MOD»՝ ձևափոխված ազգային ստանդարտների համար,
- «NEQ»՝ ոչ համարժեք ազգային ստանդարտների համար:

**5.5.3** Նախաբանում համապատասխանության աստիճանը նշում են՝ կիրառելով Ա հավելվածում տրված տիպային ձևակերպումները:

**5.5.4** Ստանդարտների կատալոգներում (տեղեկատուներում), ցանկերում, տվյալների բազաներում և այլն ազգային ստանդարտների նույնականացումը պետք է լրացվի համապատասխանության աստիճանի տառային պայմանանշանի նշումով:

*Օրինակներ՝*

*1 ՀՍՏ 186-99*

*(ԻՍՕ/ԻԷԿ 7812-1:1993)*

*Քարտեր նույնականացման. Քարտատուների նույնականացում. Համարակալման համակարգ*

*ISO/IEC 7812-1:1993, MOD*

*2 ՀՍՏ ԻՍՕ 4925-2005*

*Ճանապարհային տրանսպորտ. Ոչ նավթի հիմքով արգելակի հեղուկներ հիդրավլիկ համակարգերի համար. Տեխնիկական պայմաններ*

*ISO 4925:2005, IDT*

*3 ՀՍՏ 68-2002*

*Պարագաներ ստորջրյա լողի համար*

*ISO 6425:1996, NEQ*

*ISO 64592:1998, NEQ*

## 6 Ընդունման մեթոդները

### 6.1 Ընդհանուր պահանջները

Միջազգային ստանդարտի ընդունումը կարող է իրականացվել հետևյալ մեթոդներով՝

- հավանության (6.2),
- տիտղոսաթերթի (6.3),
- վերահրատարակման (6.4):

### 6.2 Հավանության մեթոդը

**6.2.1** Ընդունման այս մեթոդի դեպքում ստանդարտների տեղեկատուի մեջ կազմակերպակարգադրական փաստաթղթի հրապարակման միջոցով միջազգային

ստանդարտին տալիս են ազգային ստանդարտի կարգավիճակ: Միջազգային ստանդարտի տեքստը չի կցվում:

**6.2.2** Ընդունման տվյալ մեթոդը կիրառվում է համապատասխանության նույնական աստիճանով ազգային ստանդարտների համար՝ միջազգային ստանդարտի պաշտոնական տարբերակի առկայության և դրա մեջ խմբագրական փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության բացակայության դեպքում:

**6.2.3** Հավանության մեթոդը ընդունման ամենապարզ մեթոդն է:

Ընդունման այս մեթոդի դեպքում միջազգային ստանդարտը կիրառվում է բնագրի լեզվով: Սակայն այդ մեթոդը չի կիրառվում առանց միջազգային ստանդարտի առկայության, այդ իսկ պատճառով այն պետք է հասանելի լինի օգտագործողին:

### 6.3 Տիտղոսաթերթի մեթոդը

**6.3.1** Ընդունման այս մեթոդի դեպքում միջազգային ստանդարտի պաշտոնական օրինակի պատճենը (ներառյալ դրա բոլոր փոփոխությունները և (կամ) տեխնիկական ուղղումները) լրացնում են ազգային ստանդարտի տիտղոսաթերթով, ինչպես նաև մատենագիտությամբ, նախաբանով, ներածությամբ (անհրաժեշտության դեպքում):

**6.3.2** Ընդունման տվյալ մեթոդը կիրառվում է համապատասխանության նույնական կամ ձևափոխված աստիճանով ազգային ստանդարտների համար՝ միջազգային ստանդարտի մեջ խմբագրական փոփոխություններ և (կամ) տեխնիկական շեղումներ մտցնելու անհրաժեշտության բացակայության (առկայության) դեպքում:

**6.3.3** Տիտղոսաթերթի մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ օգտագործվում է միջազգային ստանդարտի ամբողջական տեքստը:

### 6.4 Վերահրատարակման մեթոդը

Միջազգային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունելու վերահրատարակման մեթոդը ներառում է՝

- թարգմանությունը (6.4.1),
- նոր խմբագրության կազմումը (6.4.2):

**6.4.1 Թարգմանությունը**

**6.4.1.1** Ազգային ստանդարտը միջազգային ստանդարտի բնագրաբնույթ տեքստն է:

**6.4.1.2** Թարգմանությունը պետք է իրականացվի բնօրինակի միայն պաշտոնական լեզվից:

**6.4.1.3** Ընդունման տվյալ մեթոդը կիրառվում է համապատասխանության նույնական կամ ձևափոխված աստիճանով ազգային ստանդարտների համար:

**6.4.1.4** Ազգային ստանդարտը (համապատասխանության նույնական աստիճանով և խմբագրական փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության բացակայության դեպքում) կարող է հրատարակվել մեկ լեզվով (միալեզու) (հայերեն) կամ երկու լեզվով (երկլեզու)՝ հայերեն և ստանդարտացման միջազգային կազմակերպության պաշտոնական լեզվով, որով ստանդարտը հրապարակված էր:

**6.4.1.5** Երկլեզու հրատարակությունը կարող է պարունակել Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից բնօրինակի կամ ստանդարտի թարգմանության իրավաբանական ուժը վավերացնող տեղեկատվություն: Այդպիսի տեղեկության բացակայության դեպքում երկու տարբերակներն էլ ունեն միևնույն իրավաբանական ուժը:

**6.4.1.6** Միալեզու հրատարակություններում պետք է նշվի բնօրինակի պաշտոնական լեզուն, որից կատարվել է թարգմանությունը:

**6.4.2 Նոր խմբագրության կազմումը**

**6.4.2.1** Եթե միջազգային ստանդարտը հրատարակվում է որպես ազգային ստանդարտ,
որը միջազգային ստանդարտի բնագրաբնույթ տեքստ չէ, ապա դա պետք է համարել նոր խմբագրության կազմում:

**6.4.2.2** Ընդունման տվյալ մեթոդը կիրառվում է համապատասխանության ձևափոխված աստիճանով ազգային ստանդարտների համար՝ միջազգային ստանդարտի հայերենով բնագրաբնույթ թարգմանության հիման վրա և միջազգային ստանդարտի մեջ խմբագրական փոփոխություններ, տեխնիկական շեղումներ մտցնելու անհրաժեշտության և (կամ) միջազգային և ազգային ստանդարտների միջև կառուցվածքային տարբերությունների առկայության դեպքում:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Միջազգային ստանդարտի կառուցվածքի փոփոխությունը խորհուրդ չի տրվում, քանի որ այդ դեպքում դժվարանում է տեխնիկական շեղումների նույնականացումն ու միջազգային և ազգային ստանդարտների բովանդակությունների համեմատումը:

**6.4.2.3** Նոր խմբագրության կազմումը միջազգային ստանդարտների ընդունման հայտնի մեթոդ է: Սակայն այս մեթոդի կիրառման դեպքում շարադրման կամ բառային ձևակերպման պատճառով էական տեխնիկական շեղումներ թույլ տալու հավանականություն կա: Այդ դեպքում միջազգային և ազգային ստանդարտների կառուցվածքների համեմատումն ու դրանց համապատասխանության աստիճանի որոշումը կարող է դժվարանալ:

Նոր խմբագրություն կազմելու մեթոդի կիրառումը դժվարացնում է նաև մեկ միջազգային ստանդարտի նկատմամբ ձևափոխված տարածաշրջանային ստանդարտների միջև համապատասխանության աստիճանի որոշումը:

**6.5 Ընդունման մեթոդի ընտրությունը**

**6.5.1** Միջազգային ստանդարտը որպես նույնական կամ ձևափոխված ազգային ստանդարտ ընդունման մեթոդի ընտրությունն իրականացվում է՝

- միջազգային ստանդարտի հայերենով բնագրաբնույթ թարգմանությամբ,

- կիրառվող միջազգային ստանդարտի նկատմամբ ազգային ստանդարտում փոփոխությունների (խմբագրական փոփոխությունների, տեխնիկական շեղումների և (կամ) կառուցվածքային փոփոխությունների) կատարմամբ:

**6.5.2** Միջազգային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունման մեթոդի ընտրության սխեման տրված է B հավելվածում:

**6.5.3** Խմբագրական փոփոխություններ կամ տեխնիկական շեղումներ մտցնելու անհրաժեշտության բացակայության դեպքում կարելի է կիրառել ընդունման ցանկացած մեթոդ:

**6.5.4** Միջազգային ստանդարտի տեքստում խմբագրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտության բացակայության դեպքում նույնական ազգային ստանդարտների համար կիրառում են թարգմանության մեթոդը:

**6.5.5** Խմբագրական փոփոխություններ, տեխնիկական շեղումներ և (կամ) կառուցվածքային փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում ձևափոխված միջազգային ստանդարտների համար կիրառում են նոր խմբագրություն կազմելու մեթոդը:

## 7 Նույնական, ձևափոխված և ոչ համարժեք ազգային ստանդարտների կառուցվածքին և ձևավորմանը ներկայացվող պահանջները

### 7.1 Ստանդարտների կառուցվածքին ներկայացվող պահանջները

**7.1.1** Ազգային ստանդարտների կառուցվածքը պետք է համապատասխանի ՀՍՏ 1.5 ստանդարտի և սույն ստանդարտի պահանջներին:

**7.1.2** Ազգային ստանդարտը պարունակում է հետևյալ տարրերը.

- տիտղոսաթերթ,
- նախաբան,
- ներածություն (անհրաժեշտության դեպքում),
- միջազգային ստանդարտի տեքստ,
- միջազգային ստանդարտի փոփոխություններ և (կամ) տեխնիկական ուղղումներ (առկայության դեպքում), որոնք ընդունվել են դրա պաշտոնական հրապարակումից (հրատարակումից) հետո,
- հավելվածներ,
- լրացուցիչ հավելվածներ (անհրաժեշտության դեպքում),
- մատենագիտական տվյալներ:

**7.1.3** Տիտղոսաթերթի մեթոդով ընդունվող ազգային ստանդարտում միջազգային ստանդարտի տեքստը (ներառած դրա տիտղոսաթերթը, նախաբանը և ներածությունը) տրվում է ամբողջությամբ:

**7.1.4** Ոչ համարժեք ստանդարտի կառուցվածքը՝ ըստ ՀՍՏ 1.5 ստանդարտի:

### 7.2 Ստանդարտների ձևավորմանը ներկայացվող պահանջները

#### 7.2.1 Ընդհանուր պահանջները

**7.2.1.1** Ազգային ստանդարտների ձևավորումը պետք է համապատասխանի ՀՍՏ 1.5 ստանդարտի և սույն ստանդարտի պահանջներին:

**7.2.1.2** Միջազգային ստանդարտի տիտղոսաթերթի մեթոդով ընդունման դեպքում ձևավորում են ազգային ստանդարտի՝

- տիտղոսաթերթը,
- նախաբանը,
- ներածությունը (անհրաժեշտության դեպքում),
- հավելվածները,
- լրացուցիչ հավելվածները (անհրաժեշտության դեպքում),
- մատենագիտական տվյալները:

**7.2.1.3** Միջազգային ստանդարտի թարգմանության և նոր խմբագրություն կազմելու մեթոդով ընդունման դեպքում վերաձևավորում են՝

- տիտղոսաթերթը,
- նախաբանը,
- ներածությունը (անհրաժեշտության դեպքում),
- ստանդարտի առաջին էջը,
- մատենագիտական տվյալները:

Կարելի է չթարգմանել միջազգային ստանդարտի «Ներածություն» տարրը, եթե այն չի պարունակում տեղեկություններ ստանդարտի մշակման և դրա այլ բաժինների մասին:

**7.2.1.4** Նույնական ազգային ստանդարտում չի թույլատրվում փոխել միջազգային ստանդարտի կառուցվածքը, հավելվածների և թվարկումների նշագրերը:

**7.2.1.5** Միջազգային ստանդարտի հիման վրա ընդունվող ազգային ստանդարտում պետք է ապահովվի միջազգային ստանդարտի ճշգրիտ նույնականացումը, որի մասին տեղեկատվությունը տրվում է տիտղոսաթերթի վրա և նախաբանում:

**7.2.1.6** Տիտղոսաթերթի մեթոդով ընդունվող ազգային ստանդարտի նշագիրը տրվում է ազգային ստանդարտի տիտղոսաթերթի և 7.2.1.2-ում նշված բոլոր տարրերի վրա: Միջազգային ստանդարտի տեքստում պահպանում են համապատասխան միջազգային կազմակերպության կողմից դրան տրված նշագիրը:

**7.2.1.7** Թարգմանության և նոր խմբագրություն կազմելու մեթոդով ընդունվող ազգային ստանդարտի նշագիրը տրվում է ստանդարտի բոլոր էջերում:

**7.2.1.8** Ոչ համարժեք ստանդարտների ձևավորումը ըստ ՀՍՏ 1.5 ստանդարտի:

**7.2.2 Տիտղոսաթերթը**

**7.2.2.1** Ազգային ստանդարտի տիտղոսաթերթը ձևավորում են ՀՍՏ 1.5 ստանդարտի և սույն ստանդարտի պահանջներին համապատասխան:

**7.2.2.2** Ազգային ստանդարտի տիտղոսաթերթի վրա տրվում է ազգային ստանդարտի անվանումը՝ հայերենով:

**7.2.2.3** Ազգային ստանդարտի տիտղոսաթերթի վրա պետք է նշվի միջազգային ստանդարտի նշագիրը՝ ներառած դրա ընդունման տարեթիվը:

**7.2.2.4** Ազգային ստանդարտի տիտղոսաթերթի վրա պետք է նշվի համապատասխանության աստիճանի նշագիրը: Համապատասխանության աստիճանը տրվում է ազգային ստանդարտի անվանման տակ փակագծերի մեջ՝ միջազգային ստանդարտի նշագրից հետո (ներառած դրա ընդունման տարեթիվը):

**7.2.2.5** Նույնական, ձևափոխված և ոչ համարժեք ազգային ստանդարտների տիտղոսաթերթի ձևավորման օրինակները տրված են Գ հավելվածում:

7.2.3 Նախաբանը

7.2.3.1 «Նախաբան» տարրը ձևավորում են ՀՍՏ 1.5 ստանդարտի և սույն ստանդարտի պահանջներին համապատասխան:

7.2.3.2 Նույնական ազգային ստանդարտի նախաբանի 1-ին կետում մշակողի մասին տեղեկությունների փոխարեն տրվում են տեղեկություններ միջազգային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունմանը նախապատրաստող կազմակերպության մասին:

*Օրինակ՝ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից:*

7.2.3.3 Նախաբանի 3-րդ կետում պետք է տրված լինի տեղեկություն միջազգային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունման մասին.

ա) միջազգային ստանդարտի նշագիրը՝ ներառած դրա ընդունման տարեթիվը և անունը հայերեն և բնօրինակի պաշտոնական լեզվով, որից իրականացվել է թարգմանությունը,

բ) տեղեկություններ միջազգային ստանդարտի փոփոխությունների և (կամ) տեխնիկական ուղղումների մասին, որոնք ընդունվել են դրա պաշտոնական հրապարակումից (հրատարակումից) հետո և մտցվել են ստանդարտի մեջ,

գ) տեղեկություններ ստանդարտը մշակող ստանդարտացման միջազգային, տարածաշրջանային կազմակերպությունների կամ այլ պետության ստանդարտացման ազգային կազմակերպության, տեխնիկական կոմիտեների մասին,

դ) բնօրինակի պաշտոնական լեզվի անվանումը և տառային նշագիրը, որից իրականացվել է թարգմանությունը,

ե) տեղեկություններ միջազգային ստանդարտների պաշտոնական օրինակների առկայության մասին,

զ) տեղեկություն, որը հաստատում է միջազգային ստանդարտի բնագրաբնույթ տեքստի հիման վրա նախապատրաստված և երկու լեզուներով հրատարակված նույնական ազգային ստանդարտի իրավական ուժը,

է) տեղեկություններ խմբագրական փոփոխությունների մասին (առկայության դեպքում)՝ դրանց կատարման պատճառների և նույնականացման մեթոդի պարզաբանումներով,

ը) տեղեկություններ տեխնիկական շեղումների (առկայության դեպքում) և (կամ) կառուցվածքային փոփոխությունների մասին `դրանց կատարման պատճառների և նույնականացման մեթոդի պարզաբանումներով,

թ) համապատասխանության աստիճանը:

Եթե տվյալ տեղեկությունները տրված են հավելվածում, ապա նախաբանում վկայակոչվում է հավելվածը:

Ազգային ստանդարտի նախաբանի 3-րդ կետի տիպային ձևակերպումների օրինակները տրված են Ա հավելվածում:

**7.2.4 Ներածությունը**

**7.2.4.1** «Ներածություն» տարրը ձևավորում են ՀՍՏ 1.5 ստանդարտի և սույն ստանդարտի պահանջներին համապատասխան:

**7.2.4.2** Ներածության մեջ տրվում է տեղեկություն ազգային ստանդարտի մշակման պատճառների մասին, ինչպես նաև տեղեկություններ միջազգային ստանդարտի «Ներածություն» տարրից դրա մշակման և միջազգային ստանդարտի այլ բաժինների մասին:

**7.2.4.3** Ներածությունը ձևակերպում են միջազգային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունման պատճառների և մեթոդի պարզաբանման անհրաժեշտության դեպքում:

**7.2.4.4** Ներածության մեջ թույլատրվում է տալ տեղեկություններ խմբագրական փոփոխությունների, տեխնիկական շեղումների և (կամ) կառուցվածքային փոփոխությունների`դրանց կատարման պատճառների և նույնականացման մեթոդի պարզաբանումով, եթե այդ տեղեկությունները հնարավոր չէ տեղադրել նախաբանում:

**7.2.5 Նորմատիվ վկայակոչումները**

**7.2.5.1** Եթե կիրառվող միջազգային ստանդարտում վկայակոչված են այլ միջազգային ստանդարտներ, ապա համապատասխանության նույնական աստիճան ունեցող ազգային ստանդարտում «Նորմատիվ վկայակոչումներ» բաժինը չեն վերաձևակերպում (պահպանում են միջազգային ստանդարտում տրված տեսքով):

Անկախ միջազգային ստանդարտները որպես ազգային ստանդարտներ ընդունումից, «Նորմատիվ վկայակոչումներ» բաժնում և նույնական ազգային ստանդարտի տեքստում վկայակոչումները պահպանում են անփոփոխ:

Ազգային ստանդարտում վկայակոչված միջազգային ստանդարտների և որպես նույնական ու ձևափոխված ստանդարտներ ընդունված ազգային ստանդարտների համապատասխանության մասին տեղեկությունները տրվում են ստանդարտի լրացուցիչ հավելվածում, որի ձևավորման օրինակը տրված է Դ հավելվածում:

Նշված լրացուցիչ հավելվածը տեղադրում են վերջում:

Նախաբանում տրվում են ցուցումներ նման լրացուցիչ հավելվածի առկայության մասին` սույն ստանդարտի Ա.1.6-ում (Ա հավելված) տրված ձևակերպմանը համապատասխան:

Նույնական ազգային ստանդարտում պահպանում են այն փաստաթղթերի վկայակոչումները, որոնց մասին տեղեկությունը տրված է կիրառվող միջազգային ստանդարտի «Մատենագիտություն» տարրում:

**7.2.5.2** Եթե կիրառվող միջազգային ստանդարտում վկայակոչվում են այլ միջազգային ստանդարտներ, ապա համապատասխանության ձևափոխված աստիճան ունեցող ազգային ստանդարտում «Նորմատիվ վկայակոչումներ» բաժինը վերաձևակերպվում է:

«Նորմատիվ վկայակոչումներ» բաժնում և ստանդարտի տեքստում որպես ազգային ստանդարտներ ընդունված միջազգային ստանդարտների վկայակոչումները փոխարինում են համապատասխան նույնական և ձևափոխված ազգային ստանդարտների վկայակոչումներով:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Միջազգային ստանդարտների վկայակոչումների փոխարինումը ազգային ստանդարտների վկայակոչումներով տեխնիկական շեղում է: Տեխնիկական շեղումների նույնականացումը՝ 7.3-ին համապատասխան:

Եթե վկայակոչված միջազգային ստանդարտներն ընդունված չեն որպես ազգային ստանդարտներ (այդ թվում նաև այն ստանդարտները, որոնց պահանջները հակասում են ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականության վարման մասին համաձայնագրին մասնակից պետությունների օրենսդրությանը և նորմատիվ փաստաթղթերին), ապա նշված միջազգային ստանդարտների փոխարեն գործող ազգային ստանդարտների մասին տեղեկատվությունը՝ ազգային ստանդարտներում այն միջազգային ստանդարտներից տեխնիկական շեղումների նշումով, որոնց փոխարինում են ազգային ստանդարտները, տրվում է ստանդարտի նախաբանում կամ հավելվածում:

Ձևավորման օրինակը տրված է Ե հավելվածում:

«Նորմատիվ վկայակոչումներ» բաժնում և ստանդարտի տեքստում նման միջազգային ստանդարտների վկայակոչումները փոխարինում են համապատասխան ազգային ստանդարտների վկայակոչումներով:

Եթե վկայակոչված միջազգային ստանդարտները ընդունված չեն որպես ազգային ստանդարտներ և ազգային ստանդարտների նախագծերը գտնվում են մշակման փուլում, ապա «Նորմատիվ վկայակոչումներ» բաժնում այդպիսի ստանդարտները նշում են տողատակի ծանոթության նշանով՝ հետևյալ տեղեկատվությամբ՝

«Միջազգային ստանդարտի պաշտոնական օրինակը գտնվում է Ստանդարտների ազգային ինստիտուտում: Ներդաշնակ ազգային ստանդարտի նախագիծը գտնվում է մշակման փուլում»:

Թույլատրելի է այն միջազգային ստանդարտների վկայակոչումները, որոնք ընդունված չեն որպես ազգային ստանդարտներ, փոխարինել միջազգային ստանդարտի համապատասխան տեքստով կամ ստանդարտի (բաժինների, ենթաբաժինների, կետերի, ենթակետերի, և հավելվածների) տեքստը տալ ազգային ստանդարտի հավելվածում:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Նման փոխարինումը տեխնիկական շեղում է: Տեխնիկական շեղումների նույնականացումը՝ 7.3-ին համապատասխան:

Թույլատրվում է ազգային ստանդարտի տեքստից հանել միջազգային ստանդարտների այն վկայակոչումները, որոնք փոխարինված են համապատասխան տեքստով, կամ համապատասխան տեքստից հետո վկայակոչել միջազգային ստանդարտները՝ փակագծերում:

Եթե միջազգային ստանդարտի տեքստը տրվում է հավելվածում, ապա ազգային ստանդարտի «Նորմատիվ վկայակոչումներ» բաժնում և տեքստում միջազգային ստանդարտների վկայակոչումները պահպանվում են:

«Նորմատիվ վկայակոչումներ» բաժնում նման ստանդարտները նշվում են տողատակի ծանոթության նշանով և տրվում է հետևյալ տեղեկատվությունը՝

«Ստանդարտը տրված է ___ հավելվածում»:

Եթե միջազգային ստանդարտի բաժինների տեքստը տրվում է հավելվածում, ապա ազգային ստանդարտի «Նորմատիվ վկայակոչումներ» բաժնում և տեքստում միջազգային ստանդարտի վկայակոչումները պահպանում են:

Ստանդարտի տեքստում տողատակի ծանոթության նշանով նշված համապատասխան վկայակոչումից հետո տրվում է հետևյալ տեղեկատվությունը՝

«___ բաժինը տրված է ___ հավելվածում»:

Վկայակոչումների փոխարինման մասին տեղեկությունները՝ դրանց կատարման պատճառների պարզաբանմամբ, տրվում է հավելվածում, որի ձևավորման օրինակը տրված է Ե հավելվածում:

Միջազգային ստանդարտների վկայակոչումների փոխարինման մասին տեղեկությունը տրվում է ազգային ստանդարտի նախաբանում՝ Ա.3.6-ում (հավելված Ա) տրված ձևակերպումներին համապատասխան:

**7.2.5.3** Համապատասխանության ոչ համարժեք աստիճան ունեցող ազգային ստանդարտում «Նորմատիվ վկայակոչումներ» բաժինը վերաձևակերպում են:

**7.2.6 Տերմինները և սահմանումները**

**7.2.6.1** Թարգմանության կամ նոր խմբագրություն կազմելու (եթե նոր խմբագրություն կազմելու համար օգտագործում են բնագրաբնույթ տեքստը) մեթոդով ընդունվող ազգային ստանդարտի «Տերմինները և սահմանումները» տարրի մեջ հայերենով տերմինից հետո, փակագծերի մեջ, տրվում է դրա համարժեքը՝ միջազգային ստանդարտի բնօրինակի լեզվով, որից կատարվել է թարգմանությունը:

**7.2.6.2** Անհրաժեշտության դեպքում տերմինաբանական հոդվածում թույլատրվում է ընդգրկել տերմինների այլ լեզուներով համարժեքները: Այդ դեպքում տերմինաբանական հոդվածները ձևավորում են ՀՍՏ 1.5 ստանդարտին համապատասխան:

**7.2.7 Նշագրերը և համառոտագրությունները**

**7.2.7.1** Ազգային ստանդարտում «Նշագրերը և համառոտագրությունները» տարրը տրվում է նույն տեսքով, ինչպես տրված է միջազգային ստանդարտում:

**7.2.7.2** Եթե թարգմանության կամ նոր խմբագրություն կազմելու մեթոդով ընդունվող ազգային ստանդարտում կիրառում են նշագրեր և համառոտագրություններ, որոնք տարբերվում են միջազգային ստանդարտում կիրառվող նշագրերից և համառոտագրություններից, ապա տրվում են ինչպես ազգային ստանդարտի, այնպես էլ միջազգային ստանդարտի նշագրերն ու համառոտագրությունները:

Միջազգային ստանդարտում ընդունված նշագրերը և համառոտագրությունները տրվում են փակագծերում:

**7.2.8 Մատենագիտությունը**

Ազգային ստանդարտի «Մատենագիտություն» տարրում տրվում է միջազգային ստանդարտի նշագիրը, ընդունման տարեթիվը և հայերեն անվանումը, փակագծերում տրվում է միջազգային ստանդարտի նշագիրը և անվանումը՝ բնօրինակի պաշտոնական լեզվով, որից իրականացվել է թարգմանությունը:

**7.2.9 Մատենագիտական տվյալները**

«Մատենագիտական տվյալներ» տարրը ձևավորում են ՀՍՏ 1.5 ստանդարտին համապատասխան, նշելով համապատասխանության աստիճանը՝ ՍԴ և ստանդարտների խումբը նշող կոդերից հետո 5.5-ին համապատասխան, տառային պայմանանշանի միջոցով:

**7.3 Խմբագրական փոփոխությունների և տեխնիկական շեղումների նույնականացման կանոնները**

**7.3.1 Ընդհանուր պահանջները**

**7.3.1.1** Միջազգային ստանդարտների նկատմամբ նույնական կամ ձևափոխված համապատասխանության աստիճան ունեցող ազգային ստանդարտներում պետք է նույնականացվեն խմբագրական փոփոխությունները, տեխնիկական շեղումները և (կամ) կառուցվածքային փոփոխությունները՝ դրանց կատարման պատճառների պարզաբանմամբ:

Վերակազմված ազգային ստանդարտում պետք է տրված լինի ազգային և միջազգային ստանդարտների կառուցվածքների համեմատությունը:

Միջազգային ստանդարտների նկատմամբ ոչ համարժեք համապատասխանության աստիճան ունեցող ազգային ստանդարտներում խմբագրական փոփոխությունները, տեխնիկական շեղումները և (կամ) կառուցվածքային փոփոխությունները չեն նույնականացվում:

**7.3.1.2** Խմբագրական փոփոխությունների, տեխնիկական շեղումների, կառուցվածքային փոփոխությունների մասին տեղեկությունը՝ դրանց կատարման և նույնականացման մեթոդի պարզաբանմամբ, տրվում է նախաբանում, ներածությունում (անհրաժեշտության դեպքում), ազգային ստանդարտի տեքստում կամ հավելվածում:

**7.3.2 Խմբագրական փոփոխությունների նույնականացումը**

**7.3.2.1** Ազգային ստանդարտում պետք է նույնականացվեն հետևյալ խմբագրական փոփոխությունները՝

- միջազգային ստանդարտում պաշտոնական հրապարակումից (հրատարակումից) հետո դրանում կատարված փոփոխությունների և (կամ) տեխնիկական ուղղումների ներառումը,

- միջազգային ստանդարտի անվանման փոփոխությունը,

- տեղեկատվական լրացուցիչ տարրերը, որոնք տեխնիկական շեղումներ չեն,

- առանձին բառակապակցությունների, տերմինների փոփոխությունը կամ փոխարինումը հայերեն բառերի հոմանիշներով՝ հայոց լեզվի կանոնների և ընդունված տերմինաբանության պահպանման նպատակով (բառային ձևակերպման փոփոխությունը),

- տեղեկատվության համար ազգային ստանդարտներով սահմանված մեծությունների միավորների վերահաշվարկված արժեքների ընդգրկումը, եթե դրանք տարբերվում են միջազգային ստանդարտով սահմանված միավորներից:

**7.3.2.2** Պաշտոնական հրապարակումից (հրատարակումից) հետո միջազգային ստանդարտում կատարված փոփոխությունները և (կամ) տեխնիկական ուղղումները տրվում են ստանդարտի տեքստում (թարգմանության մեթոդով ընդունված նույնական ազգային ստանդարտի և նոր խմբագրություն կազմելու մեթոդով ընդունված ձևափոխված ազգային ստանդարտի համար) կամ հավելվածում (տիտղոսաթերթի մեթոդով ընդունված նույնական ազգային ստանդարտի համար):

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Հավելվածը տեղադրում են միջազգային ստանդարտի վերջին հավելվածից հետո:

Պաշտոնական հրապարակումից (հրատարակումից) հետո միջազգային ստանդարտում կատարված և ազգային ստանդարտի տեքստում ընդգրկված փոփոխությունները և (կամ) տեխնիկական ուղղումները համապատասխան տեքստի աջից առանձնացվում են կրկնակի ուղղահայաց գծով:

Փոփոխությունների և (կամ) տեխնիկական ուղղումների նշագիրը և ընդունման (հաստատման) տարեթիվը տրվում են նախաբանում, ներածությունում (անհրաժեշտության դեպքում), տեքստում (համապատասխան տեքստից հետո՝ փակագծերի մեջ, կամ տեքստի ծանոթությունում) կամ հավելվածում (համապատասխան տեքստից հետո՝ փակագծերի մեջ, կամ տեքստի ծանոթությունում):

**7.3.2.3** Տեղեկատվական լրացուցիչ տարրերը տրվում են հավելվածում:

**7.3.2.4** Խմբագրական փոփոխությունների առկայության և նույնականացման մեթոդի մասին տեղեկությունը տրվում է նախաբանում, ներածությունում (անհրաժեշտության դեպքում)՝ Ա.2-ին (հավելված Ա) համապատասխան ձևակերպումներով:

**7.3.3 Չևափոխված ազգային ստանդարտներում տեխնիկական շեղումների նույնականացումը**

**7.3.3.1 Ազգային ստանդարտը պարունակում է ավելի շատ պահանջներ**

Միջազգային ստանդարտի նկատմամբ ազգային ստանդարտով սահմանված լրացուցիչ դրույթները (պահանջները) տրվում են տեքստում՝ համապատասխան տարրերից (բաժիններից, ենթաբաժիններից, կետերից, ենթակետերից, պարբերություններից, տերմինաբանական հոդվածներից) հետո, կամ հավելվածում (մեծ ծավալի դեպքում):

Ստանդարտի տեքստում ընդգրկված լրացուցիչ դրույթները (պահանջները), տեխնիկական շեղումների կատարումը պարզաբանող ծանոթությունների հետ միասին, վերցնում են բարակ գծով շրջանակի մեջ:

Տեխնիկական շեղումների կատարման պատճառների պարզաբանումը տրվում է նախաբանում (փոքր ծավալի դեպքում), լրացուցիչ տեքստի ծանոթությունում կամ հավելվածի ծանոթությունում (մեծ ծավալի դեպքում):

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Հավելվածը տեղադրում են վերջում, նշագրում են հայկական այբուբենի մեծատառով՝ ավելացնելով L տառը:

*Օրինակ՝ L.Ա, L.Բ, L.Գ:*

Առանձին արտահայտությունների, բառերի, ցուցանիշների և (կամ) դրանց արժեքների տեսքով տրված լրացուցիչ դրույթները (պահանջները) ներառում են ազգային ստանդարտի տեքստում և առանձնացնում են կիսաթավ շղատառերով:

Եթե միջազգային ստանդարտում արդեն կիրառված են կիսաթավ շղատառեր, ապա կիրառում են հորիզոնական հոծ գծով ընդգծված կիսաթավ շղատառեր:

Տեխնիկական շեղումների կատարման պատճառների պարզաբանումը տրվում է նախաբանում (փոքր ծավալի դեպքում) կամ լրացուցիչ տեքստի ծանոթությունում:

Անհրաժեշտության դեպքում ստանդարտի տեքստում որպես լրացումներ ընդգրկված տեխնիկական շեղումների ամբողջական ցանկը՝ դրանց ընդգրկման պատճառների պարզաբանումով, տրվում է հավելվածում, որի ձևավորման օրինակը տրված է Ե հավելվածում:

**7.3.3.2 Ազգային ստանդարտը պարունակում է ավելի քիչ պահանջներ**

Եթե ազգային ստանդարտում հանում են միջազգային ստանդարտի առանձին դրույթներ (պահանջներ), առանձին տարրեր (բաժիններ, ենթաբաժիններ, կետեր, ենթակետեր) և (կամ) հավելվածներ, որոնք նպատակահարմար չէ կիրառել, ապա հանված առանձին պահանջների, առանձին տարրերի և (կամ) հավելվածների տեքստերը բնօրինակի լեզվով կամ դրա բնագրաբնույթ թարգմանությունը տրվում է հավելվածում:

Տեխնիկական շեղումների կատարման պատճառների պարզաբանումը տրվում է նախաբանում (փոքր ծավալի դեպքում) կամ հավելվածի ծանոթությունում:

Միջազգային ստանդարտի առանձին պահանջների և (կամ) առանձին կառուցվածքային տարրերի հանումը, բերում է միջազգային ստանդարտի կառուցվածքի փոփոխությանը:

Միջազգային և ազգային ստանդարտների կառուցվածքների համեմատությունը տրվում է հավելվածում, որի ձևավորման օրինակը տրված է Զ հավելվածում:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Հավելվածը տեղադրում են վերջում և նշագրում են նախավերջին հավելվածի նշագրին հաջորդող լատինական այբուբենի (կամ հայկական այբուբենի, եթե ստանդարտի կառուցվածքի փոփոխման ժամանակ փոխվել են հավելվածների նշագրերը) մեծատառով:

**7.3.3.3 Ազգային ստանդարտը փոխում է միջազգային ստանդարտի մի մասը**

Եթե ազգային ստանդարտում փոխում են միջազգային ստանդարտի առանձին դրույթներ (պահանջներ) և (կամ) առանձին տարրեր, ապա փոփոխված առանձին դրույթների (պահանջների) և (կամ) առանձին տարրերի տեքստը աջից առանձնացնում են մեկ ուղղահայաց գծով:

Միջազգային ստանդարտի փոխված առանձին դրույթների (պահանջների) և (կամ) առանձին տարրերի բնօրինակի լեզվով կամ բնագրաբնույթ տեքստը տրվում է հավելվածում:

Տեխնիկական շեղումների կատարման պատճառների պարզաբանումը տրվում է նախաբանում (փոքր ծավալի դեպքում), փոխված տեքստի ծանոթությունում կամ հավելվածի ծանոթությունում:

Եթե ազգային ստանդարտը պարունակում է քիչ քանակությամբ փոփոխություններ և դրանք վերաբերում են առանձին արտահայտություններին, բառերին, ցուցանիշներին և (կամ) արժեքներին, դրանք տեքստում առանձնացնում են շղատառերով:

Եթե միջազգային ստանդարտում արդեն կիրառված են շղատառեր, ապա կիրառում են հորիզոնական հոծ գծով ընդգծված շղատառեր:

Տեխնիկական շեղումների կատարման պատճառների պարզաբանումը տրվում է նախաբանում (փոքր ծավալի դեպքում) կամ փոխված տեքստի ծանոթությունում:

Անհրաժեշտության դեպքում ստանդարտի տեքստում կատարված փոփոխությունների տեսքով տեխնիկական շեղումների ամբողջական ցանկը՝ դրանց կատարման պատճառների պարզաբանումով, տրվում է հավելվածում, որի ձևավորման օրինակը տրված է Ե հավելվածում:

**7.3.3.4 Ազգային ստանդարտը վերակազմվել է**

Եթե ազգային ստանդարտը վերակազմվել է միջազգային ստանդարտի նկատմամբ, ապա ստանդարտում տրվում է հավելված՝ ազգային և միջազգային ստանդարտների կառուցվածքների համեմատումով, որի ձևավորման օրինակը տրված է Զ հավելվածում:

Տեխնիկական շեղումների կատարման պատճառների պարզաբանումը տրվում է նախաբանում (փոքր ծավալի դեպքում) կամ հավելվածի ծանոթությունում:

**7.3.3.5 Մի քանի փոխկապակցված միջազգային ստանդարտները որպես ազգային ստանդարտ ընդունումը**

Ստանդարտում տրվում է հավելված՝ միջազգային ստանդարտների և ազգային ստանդարտի կառուցվածքների համեմատումով, որի ձևավորման օրինակը տրված է Զ հավելվածում:

Տեխնիկական շեղումների առկայության և նույնականացման մեթոդի մասին տեղեկությունը տրվում է նախաբանում, ներածությունում (անհրաժեշտության դեպքում), որը ձևակերպվում է Ա.3.1-Ա.3.5-ին (հավելված Ա) համապատասխան:

**7.3.3.6** Տեխնիկական շեղումների ամբողջ ցանկը (այդ թվում նաև լրացումները, բացառումները, փոփոխությունները)՝ դրանց կատարման պատճառների պարզաբանումով, տրվում է հավելվածում, որի ձևավորման օրինակը տրված է Ե հավելվածում:

**7.3.3.7** Տեխնիկական շեղումների առկայության մասին տեղեկությունը՝ դրանց կատարման պատճառների և նույնականացման մեթոդի պարզաբանումով, տրվում է նախաբանում, ներածությունում (անհրաժեշտության դեպքում), որը ձևակերպվում է Ա.3.1-Ա.3.7-ին (հավելված Ա) համապատասխան:

**7.3.3.8** Միջազգային ստանդարտում կիրառված ընդգծումների առկայությունից և բնույթից կախված ազգային ստանդարտում ճշգրիտ նույնականացման և տարբերության համար կիրառում են այլ ընդգծումներ (երկու բարակ գծերից շրջանակ, համապատասխան տեքստի աջից մեկ ուղղահայաց ստվերագիծ, սովորական տառատեսակ՝ ընդգծումով, կրկնակի ընդգծումով, ստվերագծով ընդգծումով, կիսաթավ տառատեսակ, կիսաթավ տառատեսակ՝ ընդգծումով, կրկնակի ընդգծումով, ստվերագծով ընդգծումով, շեղատառ, շեղատառ՝ ընդգծումով, կրկնակի ընդգծումով, ստվերագծով ընդգծումով, կիսաթավ շղատառ, կիսաթավ շղատառ՝ ընդգծումով, կրկնակի ընդգծումով, ստվերագծով ընդգծումով, ցրիվ շարվածք):

Հիմնավորված դեպքերում՝ ստանդարտացման ազգային մարմնի համաձայնությամբ կարելի է կիրառել տեխնիկական շեղումների նույնականացման այլ մեթոդներ:

## Հավելված Ա
(պարտադիր)

## Ազգային ստանդարտի նախաբանում կիրառվող տիպային ձևակերպումները

### Ա.1 Ազգային ստանդարտն ունի համապատասխանության նույնական աստիճան

**Ա.1.1** «Սույն ստանդարտը նույնական է ________[1] միջազգային ստանդարտին՝ ներառյալ դրա

________________________________________________________________
ստանդարտում կատարված բոլոր փոփոխությունների և (կամ) տեխնիկական ուղղումների

________________________________________ փոփոխությունները և (կամ) տեխնիկական
նշագրերը և ընդունման (հաստատման) տարեթվերը[2]

ուղղումները (առկայության դեպքում)»:

**Ա.1.2** «Միջազգային ստանդարտը նախապատրաստվել է ______________________
ստանդարտը մշակող

___________________________________________ կողմից»:
տեխնիկական հանձնաժողովի համարը և անվանումը[3]

**Ա.1.3** «Թարգմանությունը կատարված է ________________________
(__________)[4]»:
բնօրինակի պաշտոնական լեզուն   լեզվի նշագիրը

**Ա.1.4** «Միջազգային ստանդարտների պաշտոնական օրինակները, որոնց հիման վրա նախապատրաստվել (մշակվել) է սույն ազգային ստանդարտը և որոնք վկայակոչված են սույն ստանդարտում, գտնվում են Ստանդարտների ազգային ինստիտուտում»:

---

[1] Տրվում է միջազգային ստանդարտի նշագիրը, ընդունման տարեթիվը և հայերեն անվանումը, փակագծերում տրվում է միջազգային ստանդարտի նշագիրը, ընդունման տարեթիվը և անվանումը՝ բնօրինակի պաշտոնական լեզվով, որից կատարվել է թարգմանությունը:

***Օրինակներ՝***
***1 ԻԷԿ 61543:1995 «Դիֆերենցիալ հոսանքով կառավարվող (ԴՀԿ) կենցաղային և համանման նշանակության պաշտպանիչ սարքավորումներ. էլեկտրամագնիսական համատեղելիություն» (IEC 61543:1995 «Residual current – operated protective devices (RCDs) for household and similar use – Electromagnetic compatibility»)***
***2 ՍԻՍՊՌ 14-1:1993 «Էլեկտրամագնիսական համատեղելիություն. Կենցաղային սարքավորումներին, էլեկտրական գործիքներին և համանման սարքերին ներկայացվող պահանջներ. Մաս 1. Խանգարումահմիսիա» (CISPR 14-1:1993 «Electromagnetic compatibility – Requirements for household appliances, electric tools and similar apparatus – Part 1: Emission»):***

[2] *Օրինակ՝ A1:1999, A2:2000, A3:2001:*

[3] Տրվում է ստանդարտը մշակող ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի [ԻՍՕ/ՏԿ կամ ԻԷԿ/ՏԿ միջազգային կոմիտեի, Հայաստանի Հանրապետության ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի (ՀՀ/ՏԿ), այլ պետության ազգային ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի] համարը և անվանումը:

[4] Տրվում է այն լեզվի տառային նշագիրը, որից կատարվել է թարգմանությունը. en-անգլերեն, fr-ֆրանսերեն, de-գերմաներեն, ru-ռուսերեն:

*Օրինակ՝ «Թարգմանությունը կատարվել է անգլերենից (en)»:*

**Ա.1.5** Միջազգային ստանդարտի բնագրաբնույթ տեքստի հիման վրա և ստանդարտի երկլեզու հրապարակման ժամանակ Ա.1.1-ում տրված ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական տարբերակը հայերենով տեքստն է»:

**Ա.1.6** Վկայակոչված միջազգային ստանդարտներին համապատասխանող, որպես նույնական կամ ձևափոխված ազգային ստանդարտներ, ընդունված ազգային ստանդարտների առկայության դեպքում Ա.1.1-ում տրված ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Որպես նույնական և ձևափոխված ազգային ստանդարտներ ընդունված ազգային ստանդարտներին վկայակոչված միջազգային ստանդարտների համապատասխանության մասին տեղեկությունը տրված է լրացուցիչ ___ հավելվածում»:

**Ա.1.7** «Համապատասխանության աստիճանը՝ նույնական (IDT)»:

**Ա.2 Ազգային ստանդարտն ունի համապատասխանության նույնական կամ ձևափոխված աստիճան (ստանդարտում կատարվել են խմբագրական փոփոխություններ)**

**Ա.2.1** Եթե միջազգային ստանդարտում կատարված են խմբագրական փոփոխություններ, որոնք պետք է նույնականացվեն, ապա Ա.1 և Ա.3-ում տրված ձևակերպումները լրացնում են հետևյալով՝

«Ստանդարտում կատարվել են հետևյալ խմբագրական փոփոխությունները՝»:

**Ա.2.1.1** Եթե բազմալեզու միջազգային ստանդարտից հանվել է մեկ կամ մի քանի լեզուներով տեքստը, ապա Ա.2.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Սույն ստանդարտից հանվել է միջազգային ստանդարտի ____________________ -ով

բնօրինակի պաշտոնական լեզուն

(__________________)[1] գրված տեքստը»:

լեզվի նշագիրը

**Ա.2.1.2** Եթե ազգային ստանդարտում միջազգային ստանդարտի նկատմամբ կատարվել են փոփոխություններ և (կամ) տեխնիկական ուղղումներ, որոնք ընդունվել են դրա պաշտոնական հրապարակումից (հրատարակումից) հետո, ապա Ա.2.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Միջազգային ստանդարտի նկատմամբ կատարված փոփոխությունները և (կամ) տեխնիկական ուղղումները, որոնք ընդունվել են դրա պաշտոնական հրապարակումից (հրատարակումից) հետո, ներառված են ստանդարտի տեքստի մեջ և համապատասխան տեքստի աջ կողմից առանձնացված են կրկնակի ուղղահայաց գծով:

[1] Տե՛ս Ա.1.3-ի 4)-րդ տողատակի ծանոթությունը:

Փոփոխությունների և (կամ) տեխնիկական ուղղումների նշագրերը և ընդունման (հաստատման) տարեթվերը տրված են փակագծերում՝ համապատասխան տեքստից հետո (տեքստի ծանոթությունում)»:

«Միջազգային ստանդարտի նկատմամբ կատարված փոփոխությունները և (կամ) տեխնիկական ուղղումները, որոնք ընդունվել են դրա պաշտոնական հրապարակումից (հրատարակումից) հետո, տրված են ___ հավելվածում:

Փոփոխությունների և (կամ) տեխնիկական ուղղումների նշագրերը և ընդունման (հաստատման) տարեթվերը տրված են փակագծերում՝ համապատասխան տեքստից հետո (հավելվածի ծանոթությունում)»:

**Ա.2.1.3** Եթե ազգային ստանդարտի անվանումը փոխվել է միջազգային ստանդարտի անվանման նկատմամբ, ապա Ա.2.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Սույն ստանդարտի անվանումը փոխված է միջազգային ստանդարտի անվանման նկատմամբ ________________________________________»:
անվանումը փոխելու պատճառը

**Ա.2.1.4** Եթե ազգային ստանդարտում ներառված են տեղեկատվական լրացուցիչ տարրեր, ապա Ա.2.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Սույն ստանդարտը լրացված է հավելվածով, որտեղ տրված է ________________
տեղեկատվության բնույթը,

________________ տեղեկատվությունը (տեղեկությունները)»:
տվյալներ դրա մասին

**Ա.2.1.5** Եթե ազգային ստանդարտում առանձին արտահայտություններ կամ բառերը փոխարինվել են հոմանիշներով՝ հայոց լեզվի կանոնների և ընդունված տերմինաբանության (փոփոխություն բառային ձևակերպման մեջ) պահպանման նպատակով, ապա Ա.2.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Սույն ստանդարտում ____________ տերմինը փոխարինվել է ____________
անվանումը անվանումը

տերմինով ________________________________________»:
փոփոխության պատճառը

*Օրինակ՝ «Սույն ստանդարտում «վերելակ» տերմինը փոխարինվել է «բեռնամբարձիչ» տերմինով, քանի որ տվյալ դեպքում խոսքը վերաբերվում է բեռների բարձրացմանը»:*

**Ա.2.1.6** Եթե տեղեկատվության համար ազգային ստանդարտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ [5] սահմանված են մեծությունների միավորների վերահաշվարկված արժեքներ, ապա միջազգային ստանդարտով սահմանված միավորներից դրանց տարբերելու դեպքում Ա.2.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Սույն ստանդարտում լրացուցիչ տրված են ____________ մեծությունների
անվանումը

միավորների արժեքներ՝ վերահաշվարկված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ [5] սահմանված միավորներին համապատասխան»:

### Ա.3 Ազգային ստանդարտն ունի համապատասխանության ձևափոխված աստիճան

#### Ա.3.1 Ազգային ստանդարտը պարունակում է ավելի շատ պահանջներ

**Ա.3.1.1** «Սույն ստանդարտը ձևափոխված է միջազգային ստանդարտի նկատմամբ[1]՝ ներառյալ դրա ______________________________
ստանդարտում կատարված բոլոր փոփոխությունների և (կամ) տեխնիկական

______________________________ փոփոխությունները և (կամ)
ուղղումների նշագրերը և ընդունման (հաստատման) տարեթվերը[1]

տեխնիկական ուղղումները (առկայության դեպքում)՝ լրացուցիչ դրույթներ (պահանջներ) մտցնելու միջոցով, որը պայմանավորված է ______________________________»:
պատճառների պարզաբանումը

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Լրացուցիչ դրույթների (պահանջների) ներառման պատճառների պարզաբանումները փոքր ծավալի դեպքում տրվում են նախաբանում:

**Ա.3.1.2** «Միջազգային ստանդարտը մշակվել է ______________________________
ստանդարտը մշակող
______________________________ կողմից»:
տեխնիկական հանձնաժողովի համարը և անվանումը[2]

**Ա.3.1.3** «Թարգմանությունը կատարված է ____________ (__________)[3]»:
բնօրինակի պաշտոնական լեզուն լեզվի նշագիրը

**Ա.3.1.4** «Միջազգային ստանդարտների պաշտոնական օրինակները, որոնց հիման վրա նախապատրաստվել (մշակվել) է սույն ազգային ստանդարտը և որոնք վկայակոչված են սույն

ստանդարտում, գտնվում են Ստանդարտների ազգային ինստիտուտում»:

**Ա.3.1.5** Եթե լրացուցիչ դրույթները (պահանջները) մտցված են ստանդարտի տեքստի մեջ, ապա Ա.3.1.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

**Ա.3.1.5.1** «Լրացուցիչ դրույթները (պահանջները) տրված են ______________________________
բաժինների,
ենթաբաժինների,

______________________________
կետերի, ենթակետերի, պարբերությունների, տերմինաբանական հոդվածների համարները

և վերցված են բարակ գծով շրջանակի մեջ:

Դրանց ներառման պատճառների պարզաբանումները տրված են տեքստի ծանոթություններում»:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Մեծ ծավալի դեպքում լրացուցիչ դրույթների (պահանջների) ներառման պատճառների պարզաբանումները տրվում են տեքստի ծանոթություններում:

---

[1] Տե՛ս Ա.1.1-ի 1)-ին տողատակի ծանոթությունը:
[1] Տե՛ս Ա.1.1-ի 2)-րդ տողատակի ծանոթությունը:
[2] Տե՛ս Ա.1.2-ի 3)-րդ տողատակի ծանոթությունը:
[3] Տե՛ս Ա.1.3-ի 4)-րդ տողատակի ծանոթությունը:

**Ա.3.1.5.2** Եթե լրացուցիչ դրույթները (պահանջները) առանձին արտահայտությունների, բառերի, ցուցանիշների և (կամ) դրանց արժեքների տեսքով են, ապա Ա.3.1.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալ պարբերությունով՝

«Լրացուցիչ արտահայտությունները, բառերը, ցուցանիշները և (կամ) դրանց արժեքները ներառված են ստանդարտի տեքստում և առանձնացված են կիսաթավ շղատառերով:

Դրանց ներառման պատճառների պարզաբանումները տրված են տեքստի ծանոթություններում»:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Լրացուցիչ արտահայտությունների, բառերի, ցուցանիշների և (կամ) դրանց արժեքների ներառման պատճառների պարզաբանումները մեծ ծավալի դեպքում տրվում են տեքստի ծանոթություններում:

**Ա.3.1.6** Եթե լրացուցիչ դրույթները (պահանջները) տրված են ստանդարտի հավելվածում, ապա Ա.3.1.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

**Ա.3.1.6.1** «Լրացուցիչ դրույթները (պահանջները) տրված են ___ հավելվածում:

Դրանց ներառման պատճառների պարզաբանումները տրված են հավելվածի ծանոթություններում»:

**Ա.3.1.6.2** Եթե ազգային ստանդարտը պարունակում է միջազգային ստանդարտի ամբողջ տեքստը, իսկ լրացուցիչ դրույթները (պահանջները) տրված են ստանդարտի հավելվածում, ապա Ա.3.1.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Ընդ որում

______________________________________________________________
միջազգային ստանդարտի նշագիրը, ընդունման տարեթիվը և բաժինների համարները

բաժինները և ________________________ հավելվածները նույնական են, իսկ լրացուցիչ
հավելվածների համարները

դրույթները (պահանջները) տրված են ստանդարտի ___ հավելվածում:

Դրանց ներառման պատճառների պարզաբանումները տրված են հավելվածի ծանոթություններում»:

**Ա.3.1.7** Անհրաժեշտության դեպքում Ա.3.1.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Ստանդարտի տեքստում որպես լրացում ընդգրկված տեխնիկական շեղումների ամբողջական ցանկը՝ դրանց ընդգրկման պատճառների պարզաբանումով, տրված է ___ հավելվածում»:

**Ա.3.1.8** Անհրաժեշտության դեպքում Ա.3.1.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Տեխնիկական շեղումների ամբողջական ցանկը՝ դրանց ընդգրկման պատճառների պարզաբանումով, տրված է ___ հավելվածում»:

**Ա.3.1.9** «Համապատասխանության աստիճանը՝ ձևափոխված (MOD)»:

**Ա.3.2 Ազգային ստանդարտը պարունակում է ավելի քիչ պահանջներ**

**Ա.3.2.1** «Սույն ստանդարտը ձևափոխված է միջազգային ստանդարտի նկատմամբ[1]՝ ներառյալ դրա ______________________________
ստանդարտում կատարված բոլոր փոփոխությունների և (կամ) տեխնիկական
______________________________ փոփոխությունները և (կամ)
ուղղումների նշագրերը և ընդունման (հաստատման) տարեթվերը[2]

տեխնիկական ուղղումները (առկայության դեպքում), միջազգային ստանդարտի
______________________________
բաժինների, ենթաբաժինների, կետերի, ենթակետերի, պարբերությունների,
______________________________ , ___ հավելվածների համման միջոցով,
տերմինաբանական հոդվածների համարները

որոնք նպատակահարմար չէ կիրառել ______________________________»:
պատճառների պարզաբանումը

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Պահանջների համման պատճառների պարզաբանումները փոքր ծավալի դեպքում տրվում են նախաբանում:

**Ա.3.2.2** Տրվում է Ա.3.1.2-ի ձևակերպումը:

**Ա.3.2.3** Տրվում է Ա.3.1.3-ի ձևակերպումը:

**Ա.3.2.4** Տրվում է Ա.3.1.4-ի ձևակերպումը:

**Ա.3.2.5** Սույն հավելվածի Ա.3.2.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Համված______________________________
բաժինների, ենթաբաժինների, կետերի, ենթակետերի, պարբերությունների,
______________________________ բովանդակությունը տրված է ___ հավելվածում:
տերմինաբանական հոդվածների համարները

Պահանջների համման պատճառների պարզաբանումները տրված են հավելվածի ծանոթություններում»:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Պահանջների համման պատճառների պարզաբանումները մեծ ծավալի դեպքում տրվում են նախաբանում:

**Ա.3.2.6** Անհրաժեշտության դեպքում տրվում է Ա.3.1.8-ի ձևակերպումը:

**Ա.3.2.7** Սույն հավելվածի Ա.3.2.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Սույն ստանդարտի կառուցվածքի և միջազգային ստանդարտի կառուցվածքի համեմատությունը տրված է ___ հավելվածում:

Կառուցվածքի փոփոխության պատճառների պարզաբանումները տրված են հավելվածի ծանոթություններում»:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Կառուցվածքի փոփոխության պատճառների պարզաբանումները մեծ ծավալի դեպքում տրվում են հավելվածի ծանոթություններում:

---

[1] Տե՛ս Ա.1.1-ի 1)-ին տողատակի ծանոթությունը:
[2] Տե՛ս Ա.1.1-ի 2)-րդ տողատակի ծանոթությունը:

**Ա.3.2.8** Տրվում է Ա.3.1.9-ի ձևակերպումը:

**Ա.3.3 Ազգային ստանդարտը փոխում է միջազգային ստանդարտի մի մասը**

**Ա.3.3.1** «Սույն ստանդարտը ձևափոխված է միջազգային ստանդարտի նկատմամբ[1])՝ ներառյալ դրա ______________________________
ստանդարտում կատարված բոլոր փոփոխությունների և (կամ) տեխնիկական

______________________________ փոփոխությունները և (կամ)
ուղղումների նշագրերը և ընդունման (հաստատման) տարեթվերը[2])

տեխնիկական ուղղումները (առկայության դեպքում), դրույթների (պահանջների), տարրերի բովանդակության փոփոխության միջոցով, ինչը պայմանավորված է ____________»:
պատճառների պարզաբանումը

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Պահանջների փոփոխության պատճառների պարզաբանումները փոքր ծավալի դեպքում տրվում են նախաբանում:

**Ա.3.3.2** Տրվում է Ա.3.1.2-ի ձևակերպումը:

**Ա.3.3.3** Տրվում է Ա.3.1.3-ի ձևակերպումը:

**Ա.3.3.4** Տրվում է Ա.3.1.4-ի ձևակերպումը:

**Ա.3.3.5** Եթե փոխվել են դրույթները (պահանջները), տարրերը, Ա.3.2.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Փոփոխված դրույթների (պահանջների), տարրերի տեքստը ստանդարտում առանձնացված է աջից մեկ ուղղահայաց կիսաքավ գծով:

Դրույթների (պահանջների), տարրերի փոփոխության պատճառների պարզաբանումները տրված են տեքստի ծանոթություններում»:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Դրույթների (պահանջների), տարրերի փոփոխության պատճառների պարզաբանումները մեծ ծավալի դեպքում տրվում են տեքստի ծանոթություններում:

«Միջազգային ստանդարտի փոփոխված դրույթների (պահանջների), տարրերի բովանդակությունը տրված է ___ հավելվածում:

Դրույթների (պահանջների), տարրերի փոփոխության պատճառների պարզաբանումները տրված են հավելվածի ծանոթություններում»:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Դրույթների (պահանջների), տարրերի փոփոխության պատճառների պարզաբանումները մեծ ծավալի դեպքում տրվում են հավելվածի ծանոթություններում:

**Ա.3.3.6** Եթե փոփոխվել են առանձին արտահայտություններ, բառեր, ցուցանիշներ և (կամ) դրանց արժեքները, ապա Ա.3.3.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

---

1) Տե՛ս Ա.1.1-ի 1)-ին տողատակի ծանոթությունը:
2) Տե՛ս Ա.1.1-ի 2)-րդ տողատակի ծանոթությունը:

«Փոփոխված արտահայտությունները, բառերը, ցուցանիշները և (կամ) դրանց արժեքները տեքստում առանձնացված են շղատառերով:

Արտահայտությունների, բառերի, ցուցանիշների և (կամ) դրանց արժեքների փոփոխության պատճառների պարզաբանումները տրված են տեքստի ծանոթություններում»:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Արտահայտությունների, բառերի, ցուցանիշների և (կամ) դրանց արժեքների փոփոխության պատճառների պարզաբանումները մեծ ծավալի դեպքում տրվում են տեքստի ծանոթություններում:

**Ա.3.3.7** Անհրաժեշտության դեպքում Ա.3.3.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Ստանդարտի տեքստում որպես փոփոխություն ընդգրկված տեխնիկական շեղումների ամբողջական ցանկը՝ դրանց ընդգրկման պատճառների պարզաբանումով, տրված է ___ հավելվածում»:

**Ա.3.3.8** Անհրաժեշտության դեպքում տրվում է Ա.3.1.8-ի ձևակերպումը:

**Ա.3.3.9** Տրվում է Ա.3.1.9-ի ձևակերպումը:

**Ա.3.4 Ազգային ստանդարտը վերակազմվել է**

**Ա.3.4.1** «Սույն ստանդարտը ձևափոխված է միջազգային ստանդարտի նկատմամբ[1]՝ ներառյալ դրա ______________________________
ստանդարտում կատարված բոլոր փոփոխությունների և (կամ) տեխնիկական

______________________________ փոփոխությունները և (կամ)
ուղղումների նշագրերը և ընդունման (հաստատման) տարեթվերը [2]

տեխնիկական ուղղումները (առկայության դեպքում), կառուցվածքի փոփոխության միջոցով, ինչը պայմանավորված է ______________________________»:
պատճառների պարզաբանումը

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Կառուցվածքի փոփոխության պատճառների պարզաբանումները փոքր ծավալի դեպքում տրվում են նախաբանում:

**Ա.3.4.2** Տրվում է Ա.3.1.2-ի ձևակերպումը:

**Ա.3.4.3** Տրվում է Ա.3.1.3-ի ձևակերպումը:

**Ա.3.4.4** Տրվում է Ա.3.1.4-ի ձևակերպումը:

**Ա.3.4.5** Անհրաժեշտության դեպքում տրվում է Ա.3.1.8-ի ձևակերպումը:

**Ա.3.4.6** Սույն հավելվածի Ա.3.4.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Սույն ստանդարտի կառուցվածքի և միջազգային ստանդարտի կառուցվածքի համեմատությունը տրված է ___ հավելվածում:

Կառուցվածքի փոփոխության պատճառների պարզաբանումները տրված են հավելվածի ծանոթություններում»:

---

[1] Տե՛ս Ա.1.1-ի 1)-ին տողատակի ծանոթությունը:

[2] Տե՛ս Ա.1.1-ի 2)-րդ տողատակի ծանոթությունը:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Կառուցվածքի փոփոխության պատճառների պարզաբանումները մեծ ծավալի դեպքում տրվում են հավելվածի ծանոթություններում:

**Ա.3.4.7** Տրվում է Ա.3.1.9-ի ձևակերպումը:

**Ա.3.5 Ազգային ստանդարտը պարունակում է այլընտրանքային պահանջներ**

**Ա.3.5.1** «Սույն ստանդարտը ձևափոխված է միջազգային ստանդարտի նկատմամբ[1)]՝ ներառյալ դրա ______________________________
ստանդարտում կատարված բոլոր փոփոխությունների և (կամ) տեխնիկական
______________________________ փոփոխությունները և (կամ)
ուղղումների նշագրերը և ընդունման (հաստատման) տարեթվերը[2)]
տեխնիկական ուղղումները (առկայության դեպքում), այլընտրանքային պահանջներ մտցնելու միջոցով, ինչը պայմանավորված է ______________________________»:
պատճառների պարզաբանումը

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Այլընտրանքային պահանջների ներառման պատճառների պարզաբանումները փոքր ծավալի դեպքում տրվում են նախաբանում:

«Միջազգային ստանդարտի ____________ բաժինները լրացված են
բաժնի համարը
______________________________
պահանջների (փորձարկման մեթոդների) անվանումները
այլընտրանքային պահանջներով (փորձարկման մեթոդներով)՝ ըստ ______________
ցուցանիշների
անվանումները
ցուցանիշների»:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Նույնականացվում է, ինչպես լրացուցիչ դրույթները (պահանջները)՝ Ա.3.1-ին համապատասխան:

**Ա.3.5.2** Տրվում է Ա.3.1.2-ի ձևակերպումը:

**Ա.3.5.3** Տրվում է Ա.3.1.3-ի ձևակերպումը:

**Ա.3.5.4** Տրվում է Ա.3.1.4-ի ձևակերպումը:

**Ա.3.5.5** Անհրաժեշտության դեպքում տրվում է Ա.3.1.8-ի ձևակերպումը:

**Ա.3.5.6** Տրվում է Ա.3.1.9-ի ձևակերպումը:

**Ա.3.6 Ազգային ստանդարտում կա վկայակոչումների փոխարինում**

**Ա.3.6.1** Սույն հավելվածի Ա.3.1-ից մինչև Ա.3.5-ի ձևակերպումները լրացնում են հետևյալով՝

«Որպես ազգային ստանդարտներ ընդունված միջազգային ստանդարտների վկայակոչումները «Նորմատիվ վկայակոչումներ» բաժնում և ստանդարտի տեքստում փոխարինված են համապատասխան նույնական և ձևափոխված ազգային ստանդարտների վկայակոչումներով:

Վկայակոչումների փոխարինման մասին տեղեկությունը տրված է ___ հավելվածում»:

**Ա.3.6.2** Սույն հավելվածի Ա.3.1-ից մինչև Ա.3.5-ի ձևակերպումները լրացնում են հետևյալով՝

«Որպես ազգային ստանդարտներ չընդունված միջազգային ստանդարտների վկայակոչումները «Նորմատիվ վկայակոչումներ» բաժնում և ստանդարտի տեքստում փոխարինված են միջազգային ստանդարտների փոխարեն Հայաստանի Հանրապետությունում գործող համապատասխան ազգային ստանդարտների վկայակոչումներով:

Վկայակոչումների փոխարինման և դրա պատճառների պարզաբանումների մասին տեղեկությունները տրված են ___ հավելվածում»:

**Ա.3.6.3** Սույն հավելվածի Ա.3.1-ից մինչև Ա.3.5-ի ձևակերպումները լրացնում են հետևյալով՝

«Որպես ազգային ստանդարտներ չընդունված միջազգային ստանդարտների վկայակոչումները ստանդարտի տեքստում փոխարինված են համապատասխան տեքստով:

Վկայակոչումների փոխարինման և դրա պատճառների պարզաբանումների մասին տեղեկությունները տրված են ___ հավելվածում»:

**Ա.3.7 Ձևափոխումն իրականացված է մի քանի փոխկապակցված միջազգային ստանդարտները որպես ազգային ստանդարտ ընդունման միջոցով**

**Ա.3.7.1** Միջազգային ստանդարտներն ընդունվել են որպես ազգային ստանդարտ առանց տեխնիկական շեղումներ մտցնելու:

**Ա.3.7.1.1** «Սույն ստանդարտը ձևափոխված է ______________________________ միջազգային ստանդարտների նկատմամբ[1]՝ առանց տեխնիկական շեղումների:

Սույն ստանդարտում միջազգային ստանդարտների ընդունումը պայմանավորված է ____________________________________________________________»:

*մեկ ազգային ստանդարտում մի քանի միջազգային ստանդարտների ընդունման պատճառները*

**Ա.3.7.1.2** Տրվում է Ա.3.1.2-ի ձևակերպումը:

**Ա.3.7.1.3** Տրվում է Ա.3.1.3-ի ձևակերպումը:

**Ա.3.7.1.4** Տրվում է Ա.3.1.4-ի ձևակերպումը:

**Ա.3.7.1.5** Սույն հավելվածի Ա.3.7.1.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Սույն ստանդարտի և միջազգային ստանդարտների կառուցվածքների համեմատությունը տրված է ___ հավելվածում:

Կառուցվածքի փոփոխության պատճառների պարզաբանումները տրված են հավելվածի ծանոթություններում»:

**Ա.3.7.1.6** Տրվում է Ա.3.1.9-ի ձևակերպումը:

---

[1] Տե՛ս Ա.1.1-ի 1)-ին տողատակի ծանոթությունը:

**Ա.3.7.2** Միջազգային ստանդարտները ընդունված են որպես ազգային ստանդարտ՝ տեխնիկական շեղումներով:

**Ա.3.7.2.1** «Սույն ստանդարտը ձևափոխված է

___________________________________ միջազգային ստանդարտների նկատմամբ[1)]՝

տեխնիկական շեղումներով:

Սույն ստանդարտում միջազգային ստանդարտների ընդունումը պայմանավորված է

________________________________________________________________________________

»:

մեկ ազգային ստանդարտում մի քանի միջազգային ստանդարտների ընդունման պատճառները

**Ա.3.7.2.2** Տրվում է Ա.3.1.2-ի ձևակերպումը:

**Ա.3.7.2.3** Տրվում է Ա.3.1.3-ի ձևակերպումը:

**Ա.3.7.2.4** Տրվում է Ա.3.1.4-ի ձևակերպումը:

**Ա.3.7.2.5** Տեխնիկական շեղումների առկայության և դրանց նույնականացման մասին տեղեկությունը տրվում է Ա.3.1-ից մինչև Ա.3.5-ին համապատասխան:

Անհրաժեշտության դեպքում տրվում է Ա.3.1.8-ի ձևակերպումը:

**Ա.3.7.2.6** Սույն հավելվածի Ա.3.7.2.1-ի ձևակերպումը լրացնում են հետևյալով՝

«Սույն ստանդարտի և միջազգային ստանդարտների կառուցվածքների համեմատությունը տրված է ___ հավելվածում:

Կառուցվածքի փոփոխության պատճառների պարզաբանումները տրված են հավելվածի ծանոթություններում»:

**Ա.3.7.2.7** Տրվում է Ա.3.1.9-ի ձևակերպումը:

**Ա.4 Ազգային ստանդարտն ունի համապատասխանության ոչ համարժեք աստիճան**

**Ա.4.1 Ազգային ստանդարտում հաշվի են առնված միջազգային ստանդարտի դրույթները (պահանջները)**

**Ա.4.1.1** «Սույն ստանդարտը համապատասխանում է __________[1)] միջազգային ստանդարտին»:

**Ա.4.1.2** «Համապատասխանության աստիճանը՝ ոչ համարժեք (NEQ)»:

**Ա.4.2 Ազգային ստանդարտը մշակված է՝ մի քանի միջազգային ստանդարտների դրույթները (պահանջները) հաշվի առնելով**

**Ա.4.2.1** «Սույն ստանդարտը համապատասխանում է հետևյալ միջազգային ստանդարտներին՝ __________[1)]»:

**Ա.4.2.2** Տրվում է Ա.4.1.2-ի ձևակերպումը:

**Ա.4.3 Ազգային ստանդարտը համապատասխանում է միջազգային ստանդարտին՝ դրա առանձին պահանջների մասով**

**Ա.4.3.1** «Սույն ստանդարտը համապատասխանում է __________ միջազգային ստանդարտին[1)]՝ ________________________ պահանջների մասով»:

պահանջների անվանումները

**Ա.4.3.2** Տրվում է Ա.4.1.2-ի ձևակերպումը:

**Ա.4.4 Ազգային ստանդարտում կիրառված են միջազգային ստանդարտի առանձին բաժինները (բաժիններից մեկը) (որպես բնագրաբնույթ տեքստ)**

**Ա.4.4.1** «Սույն ստանդարտը համապատասխանում է ___________[1] միջազգային ստանդարտին:

Սույն ստանդարտի ______________________________ բաժինները նույնական են
բաժինների համարները

___________________________________________________________________________ բաժիններին»:
միջազգային ստանդարտի նշագիրը, ընդունման տարեթիվը և բաժինների համարները

**Ա.4.4.2** Տրվում է Ա.4.1.2-ի ձևակերպումը:

[1] Տե՛ս Ա.1.1-ի 1)-ին տողատակի ծանոթությունը:

## Հավելված Բ
(տեղեկատու)

## Միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտները որպես ազգային ստանդարտներ ընդունման մեթոդի ընտրությունը

<table>
<tr><th colspan="3">Միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունման մեթոդի ընտրության համար պայմանները</th><th rowspan="3">Միջազգային կամ տարածաշրջա-նային ստանդարտին ազգային ստանդարտի համապատաս-խանության աստիճանը</th><th colspan="4">Միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունման մեթոդը</th></tr>
<tr><th rowspan="2">Խմբագրական փոփոխու-թյուններ կատարելու անհրաժեշ-տությունը</th><th rowspan="2">Տեխնիկական շեղումներ մտցնելու անհրաժեշ-տությունը</th><th rowspan="2">Կառուցվածքի փոփոխության անհրաժեշ-տությունը</th><th rowspan="2">Հավանու-թյունը</th><th rowspan="2">Տիտղո–սաթերթը</th><th colspan="2">Վերահրատարակումը</th></tr>
<tr><th>Թարգմա-նությունը</th><th>Նոր խմբա–գրության կազմումը</th></tr>
<tr><td>Բացակայում է</td><td>Բացակայում է</td><td>Բացակայում է</td><td>IDT</td><td>X</td><td>X</td><td>-</td><td>-</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Բացակայում է</td><td>Բացակայում է</td><td>IDT</td><td>-</td><td>X</td><td>X</td><td>-</td></tr>
<tr><td>Առկա է (անհրաժեշ–տության դեպքում)</td><td>Առկա է</td><td>Բացակայում է</td><td>MOD</td><td>-</td><td>-</td><td>X</td><td>X</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>MOD</td><td>-</td><td>-</td><td>X</td><td>X</td></tr>
<tr><td colspan="8">Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Աղյուսակում «X» նշանը ընդունման մեթոդն է:</td></tr>
</table>

Հավելված Գ
(պարտադիր)

Ազգային ստանդարտի տիտղոսաթերթի ձևավորման օրինակները

Գ.1 Նույնական ազգային ստանդարտի տիտղոսաթերթի ձևավորման օրինակը

ՀՍՏ ԻՍՕ 4925-
2005

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

**Ճանապարհային տրանսպորտ**

ՈՉ ՆԱՎԹԻ ՀԻՄՔՈՎ ԱՐԳԵԼԱԿԻ ՀԵՂՈՒԿՆԵՐ ՀԻԴՐԱՎԼԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ

Տեխնիկական պայմաններ

(ISO 4925:2005, IDT)

ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պաշտոնական հրատարակություն
ԵՐԵՎԱՆ

Գ.2 Ձևափոխված ազգային ստանդարտի տիտղոսաթերթի ձևավորման օրինակը

**ՀՍՏ 187-99**
(ԻՍՕ 6590-1:1983,
ԻՍՕ 6590-2:1986)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

**Փաթեթվածք**

ՊԱՐԿԵՐ

Տեսակներ. Տերմիններ և սահմանումներ

(ISO 6590-1:1983, MOD
ISO 6590-2:1986, MOD)

ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պաշտոնական հրատարակություն
ԵՐԵՎԱՆ

Գ.3 Ոչ համարժեք ազգային ստանդարտի տիտղոսաթերթի ձևավորման օրինակը

ՀՍՏ 186-99

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

**Քարտեր նույնականացման**

ՔԱՐՏԱՏՈՒՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Համարակալման համակարգ

(ISO/IEC 7812-1:1993, NEQ)

ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պաշտոնական հրատարակություն
ԵՐԵՎԱՆ

## Հավելված Դ
(տեղեկատու)

## Նույնական ազգային ստանդարտներում վկայակոչված միջազգային ստանդարտներին ազգային ստանդարտների համապատասխանության մասին տեղեկությունների ձևավորման օրինակը

**Դ.1** Որպես նույնական և ձևափոխված ազգային ստանդարտներ ընդունված ազգային ստանդարտներին վկայակոչված միջազգային ստանդարտների համապատասխանությանության մասին տեղեկությունները տրված են Դ.1 աղյուսակում:

Ա ղ յ ու ս ա կ Դ.1

| Միջազգային ստանդարտի նշագիրը և անվանումը | Համապատասխանության աստիճանը | Ազգային ստանդարտի նշագիրը և անվանումը |
|---|---|---|
| ԻՍՕ 6590.1:1983 «Փաթեթվածք. Պարկեր. Բառարան և տեսակներ. Մաս 1. Թղթե պարկեր», ԻՍՕ 6590.2:1986 «Փաթեթվածք. Պարկեր. Բառարան և տեսակներ. Մաս 2. Պարկեր, պատրաստված ջերմապլաստիկ ճկուն թաղանթից» | MOD | ՀՍՏ 187-99 (ԻՍՕ 6590-2:1986, ԻՍՕ 6590-1:1983) «Փաթեթվածք. Պարկեր. Տեսակներ. Տերմիններ և սահմանումներ» |
| ԻՍՕ 10380:2003 «Խողովակաշարեր. Մետաղական ծալքավոր ճկախողովակներ և ճկախողովակային միացումներ» | IDT | ՀՍՏ ԻՍՕ 10380-2005 «Խողովակաշարեր. Մետաղական ծալքավոր ճկախողովակներ և ճկախողովակային միացումներ» |
| ԻՍՕ 10806:2003 «Խողովակաշարեր. Մետաղական ծալքավոր ճկախողովակների կցամասեր» | IDT | ՀՍՏ ԻՍՕ 10806-2005 «Խողովակաշարեր. Մետաղական ծալքավոր ճկախողովակների կցամասեր» |

**Դ.2** Վկայակոչված միջազգային ստանդարտները, որոնք ընդունվել են որպես նույնական և ձևափոխված ազգային ստանդարտներ, աղյուսակում տրվում են ստանդարտների նշագրերի գրանցման համարների աճման կարգով:

**Դ.3** Վկայակոչված միջազգային ստանդարտի նկատմամբ ձևափոխված ազգային ստանդարտի առկայության դեպքում, ընդունվող նույնական ստանդարտի պահանջների կատարման հնարավորության գնահատման նպատակով, տրվում է դրա մեջ կատարված տեխնիկական շեղումների վերլուծությունը:

**Դ.4** Աղյուսակի ծանոթությունում տրվում են տեղեկություններ վերլուծության արդյունքների մասին հետևյալ ձևակերպումով՝

«Կատարված տեխնիկական շեղումները ապահովում են սույն ստանդարտի պահանջների իրագործումը»:

«Կատարված տեխնիկական շեղումները չեն ապահովում սույն ստանդարտի

---

տրվում է ստանդարտի այն պահանջները, որոնք չեն իրագործվում

պահանջների իրագործումը»:

Անհրաժեշտության դեպքում տրվում են տեխնիկական շեղումների կատարման և ընդունվող միջազգային ստանդարտի պահանջների իրագործման պարզաբանումները:

## Հավելված Ե
(տեղեկատու)

## Տարբեր տիպերի ձևափոխված ազգային ստանդարտների համար տեխնիկական շեղումների ցանկի և դրանց կատարման պատճառների պարզաբանման ձևակերպման օրինակները

**Ե.1** Տեխնիկական շեղումների նկարագրությունը հանձնարարվում է սկսել «Լրացնել», «Փոխարինել» կամ «Հանել» բառերով:

Սույն օրինակները պարզաբանում են, թե ինչպես տարբեր տիպերի ձևափոխված ազգային ստանդարտներում տեխնիկական շեղումները կարելի է իմի բերել ցանկում և պարզաբանել:

### Ե.2 Ազգային ստանդարտը պարունակում է ավելի շատ պահանջներ

ԻՍՕ 6899:1994 «Բաց առաջնամասով մեխանիկական մամլիչների ընդունման փորձարկումների պայմաններ. Ճշտության կառավարում» ստանդարտով սահմանվում են բաց առաջնամասով մեխանիկական մամլիչների ճշտության նորմերի կառավարման պահանջները:

Ազգային ստանդարտում ճշտության նորմերի կառավարման պահանջները համապատասխանում են միջազգային ստանդարտով սահմանված պահանջներին: Ազգային ստանդարտով սահմանված են միակցիչ մասերի միջև ուղղահայաց բացակի թույլատրելի արժեքի լրացուցիչ պահանջներ, որոնք միջազգային ստանդարտում բացակայում են:

Տեխնիկական շեղումների ցանկի ձևավորման օրինակը տրված է Ե.1 աղյուսակում:

Ա ղ յ ու ս ա կ Ե.1

| Բաժինը, ենթաբաժինը, կետը, ենթակետը, աղյուսակը, հավելվածը | Ձևափոխումը |
|---|---|
| **4** Փորձարկման պայմանները և թույլատրելի չափերը | Լրացնել.<br>«Միակցիչ մասերի ուղղահայաց բացակը՝ ____ մմ-ից ոչ ավելի» |
| Պարզաբանում: Լրացուցիչ պահանջները ներառվել են, որովհետև միակցիչ մասերի միջև ուղղահայաց բացակի թույլատրելի արժեքի սահմանումն անհրաժեշտ պահանջ է մեխանիկական մամլիչների վրա պատրաստված արտադրանքի չափերի ճշտությունն ապահովելու համար: | |

### Ե.3 Ազգային ստանդարտը պարունակում է ավելի քիչ պահանջներ

Որպես ձևափոխված ազգային ստանդարտ ընդունվող ԻՍՕ 10191:1995 «Դողեր մարդատար ավտոմեքենաների համար. Դողերի բնութագրերի գնահատում. Փորձարկումների լաբորատոր մեթոդներ» ստանդարտը տարածվում է ստանդարտ տիպի և ուժեղացված տիպի (բարձրացված կրողունակությամբ) դողերի վրա:

Ազգային ստանդարտը տարածվում է միայն ստանդարտ տիպի դողերի վրա:

Տեխնիկական շեղումների ցանկի ձևավորման օրինակը տրված է Ե.2 աղյուսակում:

Ա ղ յ ու ս ա կ Ե.2

| Բաժինը, ենթաբաժինը, կետը, ենթակետը, աղյուսակը, հավելվածը | Ձևափոխումը |
|---|---|
| **5.1.1.1** Աղյուսակ 1-Կայունության փորձարկումների համար դողում ներքին ճնշումը | Հանել՝<br>«ուժեղացված (բարձրացված կրողունակությամբ)» բառերը «դողերի տիպեր» բառերից հետո |
| **5.4.1.1** Աղյուսակ 4-Մեծ արագության փորձարկումների համար դողում ներքին ճնշումը | Հանել՝<br>«ուժեղացված (բարձրացված կրողունակությամբ)» բառերը «մղման ճնշումը» բառերից հետո |
| Պարզաբանում: Ազգային ստանդարտով սահմանվում են տեխնիկական պայմաններ, որոնք հիմնված են ԻՍՕ 10191 միջազգային ստանդարտի վրա: Ազգային ստանդարտում սահմանված են ոչ միայն փորձարկման մեթոդները, այլ նաև մարդատար ավտոմեքենաների դողերի տեխնիկական պայմանները, ինչպես նաև շահագործման բնութագրերին ներկայացվող պահանջները: Բացի այդ, միջազգային ստանդարտով սահմանվում են նաև ուժեղացված տիպի (բարձրացված կրողունակությամբ) դողերի փորձարկման մեթոդների պահանջները, որը նախատեսված չէ ազգային ստանդարտի փորձարկման մեթոդներով: | |

### Ե.4 Ազգային ստանդարտը փոխում է միջազգային ստանդարտի մի մասը

ԻՍՕ 4524-2:1985 «Մետաղական պատվածք. Ոսկուց և ոսկյա համահալվածքներից գալվանական պատվածքների փորձարկման մեթոդներ. Մաս 2. Կլիմայական փորձարկումների մեթոդներ, խառը հոսանուտ գազի ազդեցության փորձարկումներ» ստանդարտով նախատեսված են փորձարկումների կատարման ժամանակ շրջակա միջավայրի պարամետրերը (ջերմաստիճանը՝ 25 $^{0}$C և հարաբերական խոնավությունը՝ 75 %): Ազգային ստանդարտում ջերմաստիճանի և հարաբերական խոնավության արժեքները համապատասխանաբար փոխարինվել են 40 $^{0}$C-ի և 80 %-ի:

Տեխնիկական շեղումների ցանկի ձևավորման օրինակը տրված է Ե.3 աղյուսակում:

Ա ղ յ ու ս ա կ Ե.3

| Բաժինը, ենթաբաժինը, կետը, ենթակետը, աղյուսակը, հավելվածը | Զևափոխումը |
|---|---|
| **5** Կլիմայական փորձարկումներ | Փոխարինել.<br>«(25 ± 2) $^{0}$C»-ը «(40 ± 1) $^{0}$C»-ով,<br>«70-ից մինչև 80 % ընդգրկույթում՝ 75 %-ին մոտ»-ը «(80 ± 5) %»-ով |
| Պարզաբանում: Շահագործման իրական պայմաններին արտաքին ազդող գործոնների՝ բարձր ջերմաստիճանի և խոնավության համապատասխանեցման նպատակով, սույն ստանդարտում փոխված են ուժեղացված կլիմայական փորձարկումների պայմանները: | |

**Ե.5 Ազգային ստանդարտն ապահովում է այլընտրանքային ընտրություն**

ԻՍՕ 7619:1997 «Ռետին. Շարժական կարծրաչափերի միջոցով կարծրության չափում» ստանդարտին համապատասխան ռետինի կարծրությունը չափվում է A և D տիպերի շարժական կարծրաչափերով:

A և D տիպերը ներառող ազգային ստանդարտի կիրառման ոլորտն ընդլայնվում է լրացուցիչ սահմանված E տիպի հաշվին, որը մասնակիորեն կրկնօրինակում է A տիպին:

Տեխնիկական շեղումների ցանկի ձևավորման օրինակը տրված է Ե.4 աղյուսակում:

Ա ղ յ ու ս ա կ Ե.4

| Բաժինը, ենթաբաժինը, կետը, ենթակետը, աղյուսակը, հավելվածը | Զևափոխումը |
|---|---|
| 1 | 2 |
| **4.1** Շարժական կարծրաչափերի տիպերը՝ A և D տիպեր | Լրացնել՝<br>«E տիպ» |
| **4.1.2** Սեղմումային թաթիկ | Լրացնել՝<br>«կենտրոնական բացակի տրամագծի նկատմամբ E տիպի կարծրաչափի համար պետք է լինի (5,4 ± 0,2) մմ» |
| **4.1.3** Ինդենտոր | Լրացնել ինդենտորի նկարագրությունն ու նկարը՝ դրա ձևի և չափերի պատկերացման համար |

| | |
|---|---|
| **4.1.4** Տրամաչափարկիչ զսպանակ | Լրացնել ա) թվարկումը՝<br>«E տիպի կարծրաչափը մինչև՝ A տիպի համար զսպանակի ուժը արտահայտող հավասարման պահանջվող ընդգրկույթը» |

*Ե.4 աղյուսակի վերջը*

| 1 | 2 |
|---|---|
| **7**-ի 7.3 ընթացակարգը<br><br><br><br>**7.3**-ի 2-րդ ծանոթությունը | Լրացնել կետը՝<br>«Չափել E տիպի կարծրաչափով, եթե A տիպի կարծրաչափով չափված կարծրությունը A20-ից պակաս է»<br>Լրացնել՝<br>«1 կգ զանգվածը հանձնարարվում է E տիպի կարծրաչափի համար» |
| Պարզաբանում: Կարծրաչափերը սարքեր են, որոնք չափում են կարծրությունը՝ ռետինի մակերևույթի մեջ ինդենտորի ներճնշվող ասեղի ներթափանցման խորության չափման միջոցով: A տիպը կիրառվում է կարծրության նորմալ արժեքով ռետինի համար, D տիպը կիրառվում է կարծրության բարձր արժեքով ռետինի համար:<br>Ազգային ստանդարտում կարծրաչափի համար սահմանված է լրացուցիչ տիպ, որը կիրառում են կարծրության ցածր արժեքով ռետինի համար: | |

**Ե.6 Ազգային ստանդարտը պարունակում է տարբեր տիպի ձևափոխություններ**

ԻԷԿ 60335-2-61:1992 ստանդարտի տեքստն ընդունված է որպես ազգային ստանդարտ հետևյալ ձևափոխություններով:

Տեխնիկական շեղումների ցանկի ձևավորման օրինակը տրված է Ե.5 աղյուսակում:

Ա ղ յ ու ս ա կ Ե.5

| Բաժինը, ենթաբաժինը, կետը, ենթակետը, աղյուսակը, հավելվածը | Ձևափոխումը |
|---|---|
| 1 | 2 |
| **11** | Տաքացումը |
| **11.8**, 3-րդ աղյուսակ | Փոխարինել 101-րդ ծանոթության տեքստը՝<br>«Մոտակա օբյեկտներ են համարվում գրիլի ելքի օդային անցքից 100 մմ հեռավորության վրա գտնվող օբյեկտները՝ չափված բացակին ուղղահայաց ուղղությամբ» |

| | |
|---|---|
| 19 | Գործարկման խախտումը |
| 19.13 | Փոխարինել՝ «175 Կ»-ը «180 Կ»-ով (երկու անգամ) |

*Ե.5 աղյուսակի վերջը*

| 1 | 2 |
|---|---|
| 19.101 | Երկրորդ պարբերությունից հետո լրացնել՝ «Ծանոթություն: Օդախառնիչի խափանումը կարելի է մոդելավորել սնման անջատման միջոցով» Հինգերորդ պարբերությունում 1-ին թվարկումը փոխարինել՝ «- գրիլի արտածգիչ օդաբաշխիչ ցանցը և անմիջական շրջապատը, - 180 Կ այն ջեռուցիչների համար, որոնք միացնում են ֆեները, որտեղ գրիլի արտածգիչ օդաբաշխիչ ցանցը տեղադրված է ջեռուցիչի կողքերում կամ առջևում, - այլ ջեռուցիչների համար առաջին 5 րոպեի ընթացքում 180 Կ, այդ ժամանակահատվածից հետո՝ 155 Կ» |
| 22 | Կառուցվածքը |
| 22.17 | 22.17-ը լրացնել հետևյալ պարբերությամբ՝ «Սույն պահանջներն ուժի մեջ են մտնում միայն տեղակայանքի հավաքակցումից հետո» |

**Ե.7 Վկայակոչումների փոխարինումը**

**Ե.7.1 «Նորմատիվ վկայակոչումները» բաժնում**

**Ե.7.1.1** Որպես ազգային ստանդարտներ ընդունված միջազգային ստանդարտների վկայակոչումները փոխարինված են համապատասխան նույնական և ձևափոխված ազգային ստանդարտների վկայակոչումներով:

Տեխնիկական շեղումների ցանկի ձևավորման օրինակը տրված է Ե.6 աղյուսակում:

Ա ղ յ ու ս ա կ Ե.6

| Բաժինը, ենթաբաժինը, կետը, ենթակետը, աղյուսակը, հավելվածը | Ձևափոխումը |
|---|---|
| **2** Նորմատիվ վկայակոչումները | «ԻԷԿ 60064:1999 Ընդհանուր լուսավորության շիկացման լամպեր կենցաղային և համանման նպատակների համար. Շահագործման բնութագրերին ներկայացվող պահանջներ» վկայակոչումը փոխարինված է «ԳՕՍՏ ԻԷԿ 60064-2001[1] Ընդհանուր լուսավորության շիկացման լամպեր կենցաղային և համանման նպատակների համար. Շահագործման բնութագրերին ներկայացվող պահանջներ» վկայակոչումով:<br>«ԻԷԿ 60335-2-15:2000 Կենցաղային և համանման էլեկտրական սարքերի անվտանգություն. Մաս 2. Հեղուկների տաքացման համար նախատեսված սարքերին ներկայացվող լրացուցիչ պահանջներ» վկայակոչումը փոխարինված է «ԳՕՍՏ ԻԷԿ 60335-2-15:2000[1] Կենցաղային և համանման էլեկտրական սարքերի անվտանգություն. Մաս 2. Հեղուկների տաքացման համար նախատեսված սարքերին ներկայացվող լրացուցիչ պահանջներ» վկայակոչումով:<br>«ԻԷԿ 60695-2-1:1980 Հրդեհավտանգության փորձարկում. Մաս 2. Փորձարկման մեթոդներ. Բաժին 1. Փորձարկում շիկացած մետաղալարով» վկայակոչումը փոխարինված է «ԳՕՍՏ 27483-87 (ԻԷԿ 60695-2-1:1980)[2] Հրդեհավտանգության փորձարկում. Փորձարկման մեթոդներ. Փորձարկում տաքացած մետաղալարով» վկայակոչումով |
| [1] Համապատասխանության աստիճանը՝ IDT:<br>[2] Համապատասխանության աստիճանը՝ MOD: | |

Տեխնիկական շեղումների բովանդակությունը և դրանց ներառման պատճառների պարզաբանումը տրվում է աղյուսակից հետո՝ Ե.1-ից մինչև Ե.6-ին համապատասխան:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Աղյուսակում որպես նույնական և ձևափոխված ազգային ստանդարտներ ընդունված վկայակոչված միջազգային ստանդարտները տրվում են ստանդարտում դրանց հիշատակման հերթականությամբ:

Աղյուսակի տողատակի ծանոթությունում տրվում է համապատասխանության աստիճանի նշագիրը:

**Ե.7.1.2** Որպես ազգային ստանդարտներ չընդունված միջազգային ստանդարտների վկայակոչումները փոխարինված են դրանց փոխարեն գործող համապատասխան ազգային ստանդարտների վկայակոչումներով:

Տեխնիկական շեղումների ցանկի ձևավորման օրինակը տրված է Ե.7 աղյուսակում:

Ա ղ յ ու ս ա կ Ե.7

<table>
<tr><th>Բաժինը, ենթաբաժինը, կետը, ենթակետը, աղյուսակը, հավելվածը</th><th>Ձևափոխումը</th></tr>
<tr><td>2 Նորմատիվ վկայակոչումները</td><td>«ԻԷԿ 60061-2:1969 Լամպերի լամպակոթեր և կոթառներ, ինչպես նաև դրանց համափոխարինելիության և անվտանգության ստուգման համար տրամաչափեր. Մաս 2. Կոթառներ» վկայակոչումը փոխարինված է «ԳՕՍՏ 580-92[1] Լամպերի կոթառներ. Անվտանգության պահանջներ և փորձարկման մեթոդներ» վկայակոչումով:</td></tr>
<tr><td colspan="2">[1] Համապատասխանության աստիճանը՝ IDT:</td></tr>
<tr><td colspan="2">Պարզաբանումներ: Վկայակոչված ԻԷԿ 60061-2:1969 «Լամպերի լամպակոթեր և կոթառներ, ինչպես նաև դրանց համափոխարինելիության և անվտանգության ստուգման համար տրամաչափեր. Մաս 2. Կոթառներ» միջազգային ստանդարտը չի ընդունվել որպես ազգային ստանդարտ, քանի որ դրա պահանջները ______________________<br>պահանջների ցանկը<br>մասով չեն համապատասխանում ______________________:<br>ազգային ստանդարտների նշագրերը և անվանումները<br>Փոխարենը կիրառվում են<br>______________________:<br>համապատասխան ազգային ստանդարտների նշագրերը և անվանումները</td></tr>
</table>

Տեխնիկական շեղումների բովանդակությունը և դրանց ներառման պատճառների պարզաբանումը տրվում է աղյուսակից հետո՝ Ե.1-ից մինչև Ե.6-ին համապատասխան:

**Ե.7.2 Ստանդարտի տեքստում**

Որպես ազգային ստանդարտներ չընդունված ԻԷԿ 60335-2-6:2001, ԻԷԿ 947-1:2000, ԻԷԿ 60335-10:2001 միջազգային ստանդարտների վկայակոչումները փոխարինված են համապատասխան տեքստով:

Տեխնիկական շեղումների ցանկի ձևավորման օրինակը տրված է Ե.8 աղյուսակում:

Ա ղ յ ու ս ա կ Ե.8

| Բաժինը, ենթաբաժինը, կետը, ենթակետը, աղյուսակը, հավելվածը | Չևափոխումը |
|---|---|
| **4.1** Էլեկտրասնման լարման աստիճանական փոփոխությունները | «ԻԷԿ 60335-2-6» վկայակոչումը փոխարինված է ԻԷԿ 60335-2-6 ստանդարտի 6.2-ի երկրորդ պարբերությունում տրված համապատասխան տեքստով: |

Տեխնիկական շեղումների բովանդակությունը և դրանց ներառման պատճառների պարզաբանումը տրվում է աղյուսակից հետո՝ Ե.1-ից մինչև Ե.6-ին համապատասխան:

## Հավելված Զ
(հանձնարարելի)

## «Միջազգային և ազգային ստանդարտների կառուցվածքների համեմատությունը» հավելվածի ձևավորման օրինակը

**Զ.1** Օրինակները տրված են Զ.1 և Զ.2 աղյուսակներում:

Ա ղ յ ու ս ա կ Զ.1

| Միջազգային ստանդարտի կառուցվածքը | | | Ազգային ստանդարտի կառուցվածքը | | |
|---|---|---|---|---|---|
| Բաժին 4 | | | - | | |
| Ենթաբաժինը | Կետը | Ենթակետը | Բաժինը | Կետը | Ենթակետը |
| 4.1 | | - | 4 | 4.1 | - |
| 4.2 | | - | | 4.2 | - |
| 4.3 | 4.3.1 | - | 5 | 5.1 | - |
| | 4.3.2 | - | | 5.2 | - |
| 4.4 | 4.4.1 | 4.4.1.1 | 6 | 6.1 | 6.1.1 |
| | | 4.4.2.2 | | | 6.1.2 |
| | 4.4.2 | 4.4.2.1 | | 6.2 | 6.2.1 |
| | | 4.4.2.2 | | | 6.2.2 |
| 4.5 | 4.5.1 | - | 7 | 7.1 | - |
| | 4.5.2 | - | | 7.2 | - |
| | 4.5.3 | - | | 7.3 | - |
| 4.6 | | - | 8 | 8.1 - 8.6 | - |
| 4.7 | | - | 9 | 9.1 - 9.3 | - |
| 4.8 | | - | 10 | 10.1 | - |
| 4.9 | | - | | | |
| Հավելվածը | | Ա | Հավելվածը | | Բ |
| | | Բ | | | Դ |
| | | Գ | | | Ա |
| | | Դ | | | Գ |
| | | - | | | Ե |
| 4.4.4.1-ում տրված օրինակները | | | Աղյուսակ 4 | | |
| Ա.1-ի 2)-րդ թվարկումը | | | Աղյուսակ Ա.1 | | |
| Ա.1-ի օրինակը | | | Աղյուսակ Ա.2 | | |
| Ծ ա ն ո թ ու թ յ ու ն ն ե ր:<br>1 Ստանդարտների կառուցվածքների համեմատությունը տրված է 4-րդ բաժնից սկսած, քանի որ ստանդարտների այլ բաժինները և այլ տարրերը (բացի նախաբանից) նույնական են:<br>2 Միջազգային ստանդարտի 4.6 և 4.7 ենթաբաժինները (կետերը) բաղկացած են մեծ քանակությամբ պարբերություններից, որոնցից մի մասը սույն ստանդարտում նշված են որպես 8.1-ից մինչև 8.6 և 9.1-ից մինչև 9.3 կետեր: | | | | | |

Ա ղ յ ու ս ա կ Զ.2

| ԻՍՕ XXXX:XXXX միջազգային ստանդարտի կառուցվածքը | | | ԻՍՕ XXXX:XXXX միջազգային ստանդարտի կառուցվածքը | | | Ազգային ստանդարտի կառուցվածքը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բաժին 2 | | | Բաժին 3 | | | - | | |
| Ենթաբաժինը | Կետը | Ենթակետը | Բաժինը | Կետը | Ենթակետը | Բաժինը | Կետը | Ենթակետը |
| 2.1 | | - | - | | | 2 | 2.1 | - |
| 2.2 | | - | - | | | | 2.2 | - |
| 2.3 | 2.3.1 | - | - | | | 3 | 3.1 | - |
| | 2.3.2 | - | - | | | | 3.2 | - |
| 2.4 | 2.4.1 | 2.4.1.1 | - | | | 4 | 4.1 | 4.1.1 |
| | | 2.4.1.2 | - | | | | | 4.1.2 |
| | 2.4.2 | 2.4.2.1 | - | | | | 4.2 | 4.2.1 |
| | | 2.4.2.2 | - | | | | | 4.2.2 |
| - | | | 3.4 | 3.4.1 | - | 5 | 5.1 | - |
| - | | | | 3.4.2 | - | | 5.2 | - |
| - | | | - | 3.4.3 | - | | 5.3 | - |
| - | | | - | | - | 6 | 6.1 - 6.5 | - |
| - | | | 3.6 | | - | 7 | 7.1 - 7.3 | - |
| - | | | 3.7 | | - | 8 | 8.1 | - |
| - | | | 3.8 | | - | | | - |
| Հավելվածը | | Ա | - | | | Հավելվածը | | Բ |
| | | Բ | - | | | | | Գ |
| | | Գ | - | | | | | Ա |
| - | | | 3.4.1-ում տրված օրինակները | | | Աղյուսակ 3 | | |
| - | | | Ա.1-ի 2)-րդ թվարկումը | | | Աղյուսակ Բ.2 | | |

## Մատենագիտություն

[1] ԻՍՕ/ԻԷԿ դիրեկտիվներ, Մաս 2, 2001 Միջազգային ստանդարտների կառուցման և մշակման կանոններ (Directives ISO/IEC, Part 2 Rules for the structure and drafting of International Standards)

[2] ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 21-1:2005 Միջազգային ստանդարտները և այլ միջազգային հրատարակությունները որպես տարածաշրջանային կամ ազգային ընդունումը. Մաս 1. Միջազգային ստանդարտների ընդունում (ISO/IEC Guide 21-1:2005 Regional or national adoption of International Standards and other International Deliverables - Part 1: Adoption of International Standards)

[3] ԻՍՕ/ԳԵՆ 20:2000 (ԻՍՕ ՊՕԿՕՍԱ 2000) Հեղինակային իրավունքի, դրա կիրառման և հրապարակումների վաճառքի ԻՍՕ քաղաքականությունը և ընթացակարգերը (ISO/GEN 20:2000 (ISO POCOSA 2000) ISO policies and procedures for copyright, exploitation right and sales of ISO publications)

[4] ԻՍՕ/ԻԷԿ դիրեկտիվներ, Մաս 1, 2001 Տեխնիկական աշխատանքի ընթացակարգերը (Directives ISO/IEC, Part 1 Procedures for the technical work)

[5] «Մեծությունների միավորների, չափումների սանդղակների անվանումը, նշագրումը, գրելաձևն ու դրանց կիրառման կանոնները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի ապրիլի 30-ի N 260 և 1999 թվականի մայիսի 3-ի N 277 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1938-Ն որոշում

| ՀՏԴ 006.058 | ՄԴ 01.120 | S 50 | NEQ |
|---|---|---|---|

Հանգուցային բառեր. միջազգային ստանդարտ, տարածաշրջանային ստանդարտ, ազգային ստանդարտ, միջազգային ստանդարտի կիրառում, միջազգային ստանդարտի ընդունում, ընդունման մեթոդ, համապատասխանության աստիճան

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1 ՀՍՏ 1.6-2006 Ստանդարտացման ազգային համակարգ. Միջազգային և տարածաշրջանային ստանդարտները որպես ազգային ստանդարտներ ընդունման կանոններ և մեթոդներ

ԸՆԴՈՒՆՎԵԼ է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ է ԴՐՎԵԼ Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի (ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի) 2007 թվականի դեկտեմբերի 26-ի N 268-Ա հրամանով
ԳՐԱՆՑՎԵԼ է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում N 533-2007 առ 29.12.2007

Գործարկման թվականը 01.01.2008

Բովանդակության «6.3 Տիտղոսաթերթի մեթոդը» բառերը հանել, «6.4» կետը փոխարինել «6.3» կետով, իսկ «6.5» կետը՝ «6.4» կետով:

6-րդ բաժինը շարադրել նոր խմբագրությամբ՝

## «6 Ընդունման մեթոդները

### 6.1 Ընդհանուր պահանջները

Միջազգային ստանդարտի ընդունումը կարող է իրականացվել հետևյալ մեթոդներով՝

- հավանության (6.2),
- վերահրատարակման (6.3):

### 6.2 Հավանության մեթոդը

**6.2.1** Ընդունման տվյալ մեթոդի դեպքում միջազգային ստանդարտի պաշտոնական օրինակի պատճենը (ներառյալ դրա բոլոր փոփոխությունները և (կամ) տեխնիկական ուղղումները) լրացնում են ազգային ստանդարտի տիտղոսաթերթով, ինչպես նաև մատենագիտությամբ, նախաբանով, ներածությամբ (անհրաժեշտության դեպքում):

**6.2.2** Ընդունման տվյալ մեթոդը կիրառվում է համապատասխանության նույնական աստիճանով ազգային ստանդարտների համար՝ միջազգային ստանդարտի մեջ խմբագրական փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության բացակայության (առկայության) դեպքում:

**6.2.3** Հավանության մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ օգտագործվում է միջազգային ստանդարտի ամբողջական տեքստը:

### 6.3 Վերահրատարակման մեթոդը

Միջազգային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունելու վերահրատարակման մեթոդը ներառում է՝

- թարգմանությունը (6.3.1),
- նոր խմբագրության կազմումը (6.3.2):

**6.3.1 Թարգմանությունը**

**6.3.1.1** Ազգային ստանդարտը միջազգային ստանդարտի բնագրաբնույթ տեքստն է:

**6.3.1.2** Թարգմանությունը պետք է իրականացվի բնօրինակի միայն պաշտոնական լեզվից:

**6.3.1.3** Ընդունման տվյալ մեթոդը կիրառվում է համապատասխանության նույնական կամ ձևափոխված աստիճանով ազգային ստանդարտների համար:

**6.3.1.4** Ազգային ստանդարտը (համապատասխանության նույնական աստիճանով և խմբագրական փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության բացակայության դեպքում) կարող է հրատարակվել մեկ լեզվով (միալեզու)՝ հայերեն կամ երկու լեզվով (երկլեզու)՝ հայերեն և ստանդարտացման միջազգային կազմակերպության պաշտոնական լեզվով, որով ստանդարտը հրապարակված էր:

**6.3.1.5** Երկլեզու հրատարակությունը կարող է պարունակել ստանդարտացման ազգային մարմնի կողմից բնօրինակի կամ ստանդարտի թարգմանության իրավաբանական ուժը վավերացնող տեղեկատվություն: Այդպիսի տեղեկության բացակայության դեպքում երկու տարբերակներն էլ ունեն միևնույն իրավաբանական ուժը:

**6.3.1.6** Միալեզու հրատարակություններում պետք է նշվի բնօրինակի պաշտոնական լեզուն, որից կատարվել է թարգմանությունը:

**6.3.2 Նոր խմբագրության կազմումը**

**6.3.2.1** Եթե միջազգային ստանդարտը հրատարակվում է որպես ազգային ստանդարտ, որը միջազգային ստանդարտի բնագրաբնույթ տեքստ չէ, ապա դա պետք է համարել նոր խմբագրության կազմում:

**6.3.2.2** Ընդունման տվյալ մեթոդը կիրառվում է համապատասխանության ձևափոխված աստիճանով ազգային ստանդարտների համար՝ միջազգային ստանդարտի հայերեն բնագրաբնույթ թարգմանության հիման վրա և միջազգային ստանդարտի մեջ խմբագրական փոփոխություններ, տեխնիկական շեղումներ մտցնելու անհրաժեշտության և (կամ) միջազգային և ազգային ստանդարտների միջև կառուցվածքային տարբերությունների առկայության դեպքում:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Միջազգային ստանդարտի կառուցվածքի փոփոխությունը խորհուրդ չի տրվում, քանի որ այդ դեպքում դժվարանում է տեխնիկական շեղումների նույնականացումն ու միջազգային և ազգային ստանդարտների բովանդակությունների համեմատումը:

**6.3.2.3** Նոր խմբագրության կազմումը միջազգային ստանդարտների ընդունման հայտնի մեթոդ է: Սակայն այս մեթոդի կիրառման դեպքում շարադրման կամ բառային ձևակերպման պատճառով էական տեխնիկական շեղումներ թույլ տալու հավանականություն կա: Այդ դեպքում միջազգային և ազգային ստանդարտների կառուցվածքների համեմատումն ու դրանց համապատասխանության աստիճանի որոշումը կարող է դժվարանալ:

Նոր խմբագրություն կազմելու մեթոդի կիրառումը դժվարացնում է նաև նույն միջազգային ստանդարտի նկատմամբ ձևափոխված տարածաշրջանային ստանդարտների միջև համապատասխանության աստիճանի որոշումը:

**6.4 Ընդունման մեթոդի ընտրությունը**

**6.4.1** Միջազգային ստանդարտը որպես նույնական կամ ձևափոխված ազգային ստանդարտ ընդունման մեթոդի ընտրությունն իրականացվում է՝

- միջազգային ստանդարտի հայերեն բնագրաբնույթ թարգմանությամբ,

- կիրառվող միջազգային ստանդարտի նկատմամբ ազգային ստանդարտում փոփոխությունների (խմբագրական փոփոխությունների, տեխնիկական շեղումների և (կամ) կառուցվածքային փոփոխությունների) կատարմամբ:

**6.4.2** Միջազգային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունման մեթոդի ընտրության սխեման տրված է Բ հավելվածում:

**6.4.3** Խմբագրական փոփոխություններ կամ տեխնիկական շեղումներ մտցնելու անհրաժեշտության բացակայության դեպքում կարելի է կիրառել ընդունման ցանկացած մեթոդ:

**6.4.4** Միջազգային ստանդարտի տեքստում խմբագրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտության բացակայության դեպքում այն ընդունում են թարգմանությամբ՝ որպես նույնական ազգային ստանդարտ:

**6.4.5** Խմբագրական փոփոխություններ, տեխնիկական շեղումներ և (կամ) կառուցվածքային փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում միջազգային ստանդարտը ընդունում են՝ նոր խմբագրության կազմմամբ:»:

7.1.3, 7.2.1.2, 7.2.1.6 և 7.3.2.2 ենթակետերում «տիտղոսաթերթի» բառը փոխարինել «հավանության» բառով:

Բ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«**Հավելված Բ**

(տեղեկատու)

**Միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտները որպես ազգային ստանդարտներ ընդունման մեթոդի ընտրությունը**

| Միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունման մեթոդի ընտրության պայմանները | | | Միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտին ազգային ստանդարտի համապատասխանության աստիճանը | Միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտը որպես ազգային ստանդարտ ընդունման մեթոդը | | |
|---|---|---|---|---|---|---|
| Խմբագրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը | Տեխնիկական շեղումներ մտցնելու անհրաժեշտությունը | Կառուցվածքի փոփոխության անհրաժեշտությունը | | Հավանությունը | Վերահրատարակումը | |
| | | | | | Թարգմանությունը | Նոր խմբագրության կազմումը |
| Բացակայում է | Բացակայում է | Բացակայում է | IDT | X | - | - |
| Առկա է | Բացակայում է | Բացակայում է | IDT | X | X | - |
| Առկա է (անհրաժեշտության դեպքում) | Առկա է | Բացակայում է | MOD | - | X | X |
| Առկա է | Առկա է | Առկա է | MOD | - | X | X |
| Առկա է | Առկա է | Առկա է | NEQ | - | X | X |
| Ծ ա ն ո թ ու թ յ ու ն: Աղյուսակում «X» նշանը ընդունման մեթոդն է: | | | | | | |

»:

Գ հավելվածի Գ.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Գ.1 Նույնական ազգային ստանդարտի տիտղոսաթերթի ձևավորման օրինակը

ՀՍՏ ԻՍՕ 4925-2005

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Գործարկման թվականը[*]՝

Ճանապարհային տրանսպորտ

ՈՉ ՆԱՎԹԻ ՀԻՄՔՈՎ ԱՐԳԵԼԱԿԻ ՀԵՂՈՒԿՆԵՐ ՀԻԴՐԱՎԼԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ

Տեխնիկական պայմաններ

(ISO 4925:2005, IDT)

ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պաշտոնական հրատարակություն
ԵՐԵՎԱՆ

[*] Նույնական ազգային ստանդարտի տիտղոսաթերթի վրա գործարկման թվականը նշվում է միայն տվյալ միջազգային ստանդարտը որպես ազգային ստանդարտ հավանության մեթոդով ընդունելու դեպքում:»: